# Մ Ե Թ Ո Դ Ա Կ Ա Ն   Ց ՈՒ Ց ՈՒ Մ Ն Ե Ր

## ՀՀ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀՀ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՔ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

## ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| ԱԺ | Ազգային Ժողով |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՄԺԾԾ | միջնաժամկետ ծախսերի ծրագիր |
| ԾԲ | ծրագրային բյուջետավորում |
| ԾԻԳ | ծրագրերի իրականացման գրասենյակ |
| ՊՈԱԿ | պետական ոչ առևտրային կազմակերպություն |
| ՖՆ | ֆինանսների նախարարություն |
| ԳԶԲ | Գենդերային զգայուն բյուջե |
| ՔԲ | Քաղաքացու բյուջե |

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........ 4
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽՈՐԴ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ........ 6
ՄԱՍ 1. ՀՀ 2021-2023 ԹԹ. ՄԺԾԾ ԵՎ ՀՀ 2021 Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ........ 8
1.1 ՀՀ 2021-2023 թթ. ՄԺԾԾ որոշումները ........ 9
1.2. ՀՀ 2021թ. բյուջետային գործընթացի ժամանակացույցի ամփոփ նկարագիրը, պետական մարմիններին ներկայացվող հիմնական պահանջները և առանցքային ժամկետները........ 9
1.3 Հատուկ ցուցումներ և օրենսդրական հիմքեր՝ բյուջետային ծախսերի հաշվարկների կատարման համար........ 10
ՄԱՍ 2. 2021-2023 ԹԹ. ՄԺԾԾ (ՆԵՐԱՌՅԱԼ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ) ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ........ 11
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ........ 14
ՄԱՍ 3. ՄԺԾԾ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.... 25
Հավելված N 1. Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ամփոփ ձևաչափ[1]........ 25
Հավելված N 2. Նոր նախաձեռնությունների ներկայացման ձևաչափ[1]........ 31
Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ ........ 37
Հավելված N 4. Բյուջետային ծրագրերի գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների........ 41
Հավելված N 5. Բյուջետային ծրագրերի գծով ծախսերի բաշխումն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման տարրերի ........ 42
Հավելված N 6. Նոր նախաձեռնությունների ֆինանսավորման աղբյուրները (ամփոփ) և առաջնահերթությունները........ 43
Հավելված N 7. Պետական մարմնի և դրա ենթակա կազմակերպությունների ստացվելիք եկամուտների աղբյուրները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների) ........ 45
Հավելված N 8. Բյուջետային ծրագրերի/միջոցառումների գծով ծախսերը՝ վարչատարածքային բաժանմամբ (ըստ մարզերի) ........ 46
Հավելված N 9. Արտաքին աղբյուրներից բյուջետային խողովակներով ստացվող նպատակային վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերը........ 47
Հավելված N 10. Ամփոփ ֆինանսական պահանջներ ՄԺԾԾ ժամանակահատվածի համար ........ 49
Հավելված N 11. Արտաքին աղբյուրներից բյուջետային խողովակներով ստացվող նպատակային վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերի գծով 2021թ. ամփոփ բյուջետային ֆինանսավորումը ........ 51
Հավելված N 12........ 54
Հավելված N 13........ 56
Հավելված N 14........ 67

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդ-վածի 1-ին մասի պահանջներին համապատասխան ընդունված ՀՀ վարչապետի 2020 թվականի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N5-Ա որոշմամբ (այսուհետ՝ Վարչապետի որոշում) սկսվել է 2021 թվականի բյուջետային գործընթացը և հաստատվել է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մշակման գործընթացի` ՀՀ 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) և ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցը: Այն իրենից ներկայացնում է մեկ ընդհանուր գործընթաց, որը սկսվում է ընթացիկ տարվա հունվար ամսին և ավարտվում է նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ ՀՀ ԱԺ կողմից պետական բյուջեի մասին օրենքի ընդունմամբ:

Սույն մեթոդական ցուցումները (այսուհետ՝ մեթոդական ցուցումներ) մշակվել են ՀՀ վարչապետի նշված որոշման պահանջներին համապատասխան և նպատակ ունեն օժանդակելու Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության և տարածքային կառավարման բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող (այսուհետ՝ ԲԳԿ) հայտատու մարմիններին (այսուհետ` Հայտատու)՝ ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացի շրջանակներում իրենց 2021-2023 թվականների ՄԺԾԾ և 2021 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման (այսուհետ՝ հայտեր) և դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման գործում:

Հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ կառավարության կողմից հաստատված ցանկացած ռազմավարություն և ծրագիր պետք է արտացոլվի բյուջեում՝ ապահովելով սերտ կապ ՀՀ կառավարության ռազմավարությունների և պետական բյուջեի միջև:

Հաշվի առնելով վերոգրյալը Հայտատու մարմիններն իրենց ֆինանսավորման հայտերը կազմելիս, տարածքային զարգացման ծրագրերի գծով հաշվետվողականության մեխանիզմների ստեղծման, ինչպես նաև բյուջետային քննարկումների արդյունավետության բարձրացման նպատակով պետք է հաշվի առնեն նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերը և այդ ծրագրերին համահունչ կազմված հայտերով առաջարկվող ծախսային ծրագրերի հատկացումները ներկայացնեն նաև տարածքային (ըստ մարզերի) բացվածքով՝ համապատասխան բացատրական-վերլուծական տեղեկատվությամբ:

Հարկ է հիշել, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի, առաջիկա երեք տարվա` Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման նպատակն է հնարավորություն ստեղ-ծել կառավարության համար կառավարելու պետական հատվածի ֆինանսական ռեսուրսներն իր միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություն-ների համապատասխան: Միաժամանակ, միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ծառայում է հիմք` պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ 2020թ. պետական բյուջեի պատրաստման գործընթացում փորձարկվել է գենդերային զգայուն բյուջետավորման (ԳԶԲ) մոտեցման ներդրումը: Մասնավորապես, ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածություն» և «Ընտանիքներին՝ կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրերի շրջանակներում մշակվել են լրացուցիչ միջոցառումներ և գենդերային զգայուն ցուցանիշներ, ինչպես նաև վերանայվել են վերջնական

արդյունքների, նպատակների և միջոցառումների նկարագրությունները՝ հաշվի առնելով ՀՀ գենդերային քաղաքականության ռազմավարությունը և դրանից բխող արդյունքները, ինչպես նաև բյուջետային ծրագրերի, միջոցառումների և դրանց գծով արդյունքային ցուցանիշների սահմանման վերաբերյալ ընդունված ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության պահանջները:

2021-2023թթ. ՄԺԾԾ և 2021թ. պետական բյուջեի մշակման գործընթացում գենդերային զգայուն բյուջետավորման տարրերը պետք է ներդրվեն ամբողջապես: Այդ նպատակով մշակվել է «Գենդերային զգայուն բյուջետային ծրագրերի սահմանման» մեթոդական ձեռնարկը, (կցվում է): ՀՀ կառավարությունը 19.09.2019թ. N 1334-Լ որոշմամբ հաստատել է 2019-2023թթ. գենդերային քաղաքականության ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը, որը պետք է արտացոլվի պետական բյուջեում՝ ապահովելով սերտ կապ ՀՀ կառավարության ռազմավարությունների և պետական բյուջեի միջև: Ելնելով այս սկզբունքից՝ բյուջետային ծրագրերը, միջոցառումները, դրանց նպատակները, նկարագրությունները և արդյունքային ցուցանիշները պետք է սերտորեն կապված լինեն նաև գենդերային քաղաքականության ռազմավարության միջոցառումների, նպատակների, գերակայությունների և արդյունքների հետ:

Սույն մեթոդական ցուցումները հանդիսանում են միասնական ուղեցույց պետական մար-մինների ֆինանսավորման հայտերի կազմման համար:

Մեթոդական ցուցումները բաղկացած են հետևյալ երեք մասերից

- **<u>Մաս 1 –</u>** նկարագրվում են ՀՀ 2021-2023 թվականների ՄԺԾԾ և ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի նախագծերի կազմման գործընթացներին վերաբերող ընդհանուր բնույթի հիմնական տեղեկությունները, մասնավորապես` ՀՀ 2021-2023 թվականների ՄԺԾԾ և ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի գծով որոշումները, ՀՀ 2021-2023 թվականների ՄԺԾԾ և 2021 թվականի բյուջետային գործընթացի հանգուցային ժամկետները և պետական մարմիններին ներկայացվող պահանջները, ինչպես նաև հատուկ ցուցումներ և օրենսդրական հիմքեր` բյուջետային ծախսերի հաշվարկների կատարման համար:
- **<u>Մաս 2 -</u>** տրվում են 2021-2023 թվականների ՄԺԾԾ (ներառյալ 2021 թվականի բյուջետային ֆինանսավորման) հայտերի կազմման առանձին ցուցումներ` ընդհանուր դրույթների և վերջինիս կից ֆինանսավորման հայտի օրինակելի ձևի տեսքով:
- **<u>Մաս 3</u>** - բերվում են 2021-2023 թվականների ՄԺԾԾ (ներառյալ 2021 թվականի բյուջետային ֆինանսավորման) հայտերի կազմման ցուցումների հավելվածներ:

Սույն մեթոդական ցուցումներն, իր բոլոր մասերով և հավելվածներով, տեղադրված են նաև ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում (http://www.minfin.am/hy/page/petakan_byuj):

Մեթոդական ցուցումների կամ բյուջետային գործընթացում ծագած՝ պետական մարմնի նկատմամբ առաջադրվող պահանջներին վերաբերող ցանկացած հարց հայտատուները կարող են ուղղել ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության համապատասխան ստորաբաժանումների պատասխանատու մասնագետներին.

| Ստորաբաժանման անվանումը | Հեռախոսահամարները |
|---|---|
| Սոցիալական ընթացիկ ծրագրերի ֆինանսական ծրագրավորման բաժին | 011-800228, 011-800245, 011-800247, 011-800252) |
| Բյուջետային գործընթացի համակարգման և ուժային մարմինների ընթացիկ ծրագրերի ֆինանսական | 011-800243, |

| | |
|---|---|
| ծրագրավորման բաժին | |
| Կապիտալ ծախսերի, ներդրումային, վարկային և դրամաշնորհային ծրագրերի ֆինանսական ծրագրավորման բաժին | 011-800226, |
| Պետական մարմինների և կազմակերպությունների պահպանման ծրագրերի, գույքի կառավարման ֆինանսական ծրագրավորման բաժին | 011-800242, 011-800241, 011-800231, |
| Տնտեսության իրական հատվածի ընթացիկ ծրագրերի ֆինանսական ծրագրավորման բաժին | 011-800238, |

Առաջարկվում է Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարին, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահին, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի նախագահին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետին, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի նախագահին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահին, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահին, Հայաստանի Հանրապետության հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահին 2021-2023 ՄԺԾԾ և/կամ 2021 թվականի տարեկան ծախսերը պլանավորելիս առաջնորդվել սույն ցուցումներով, հայտերը կազմել և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել սույն ցուցումներին համապատասխան: Ընդ որում, առաջարկվում է, որ այդ մարմինները ՀՀ ֆինանսների նախարարությանը հասանելի դարձնեն նաև ծախսերի պլանավորման համար հիմք հանդիսացած մանրամասն հաշվարկ-հիմնավորումները բացված ըստ առանձին ծախսատեսակների:

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽՈՐԴ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ

2021 թվականի բյուջետային գործընթացում որոշակի փոփոխություններ են իրականացվել նախորդ՝ 2020 թվականի բյուջետային գործընթացի համեմատ: Նշված փոփոխությունները վերաբերվում են ինչպես գործընթացի հիմնական փուլերին, իրականացվող միջոցառումներին, այնպես էլ գործընթացում ներգրավված մարմիններին և ժամանակացույցին: Արդյունքում որոշակի փոփոխությունների են ենթարկվել նաև մեթոդական ցուցումները:

Բյուջետային գործընթացում իրականացված փոփոխությունների արդյունքում նախկինի համեմատ որոշակիորեն պարզեցվել են այդ գործընթացները, ավելի շատ ժամանակ է հատկացվել ծախսային քաղաքականության և ծրագրերի շուրջ բովանդակային քննարկումների համար, բարձրացվել է բյուջետային գործընթացի թափանցիկությունը և բարելավվել են մասնակցային գործընթացները: Մասնավորապես, ինչպես նախորդ, այնպես էլ 2021թ. բյուջետային գործընթացի շրջանակներում հայտերով ծախսային առաջարկները ՀՀ ՖՆ պետք է ներկայացվելու ըստ հետևյալ ուղղությունների.

- ծախսային քաղաքականության անփոփոխ լինելու պայմաններում գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գծով ծախսերը՝ բացված ըստ պարտադիր և շարունակական հայեցողական ծախսերի,
- գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գծով ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկները,
- նոր նախաձեռնությունները՝ բացված ըստ պարտադիր և հայեցողական ծախսերի և ըստ դրանց իրականացման առաջնահերթությունների,
- ոլորտային ծախսային քաղաքականության շարադրանքը, ներառյալ ոլորտային ծախսային քաղաքականության թիրախները:

Սակայն, ի տարբերություն նախորդ գործընթացի, 2021 թ. գործընթացի շրջանակներում **հայտերը ՀՀ ՖՆ պետք է ներկայացվեն երկու փուլով՝**

- **մինչև մարտի 2-ը -** ՀՀ ՖՆ պետք է ներկայացվեն հայտերը պարտադիր և շարունակական հայեցողական ծախսերի մասով՝ առանց նոր նախաձեռնությունների, և
- **մինչև մարտի 16-ը -** ՀՀ ՖՆ պետք է ներկայացվեն հայտերը հայեցողական ծախսերի և նոր նախաձեռնությունների մասով:

Մեթոդական ցուցումներում կատարված հիմնական փոփոխություններից մեկը գենդերային զգայուն բյուջետավորման տարրերի ներդրման պահանջն է բոլոր պետական մարմինների համապատասխան բյուջետային ծրագրերում: Մասնավորապես, պահանջվում է, որ բյուջետային ծրագրերը կազմելիս հաշվի առնվեն ՀՀ գենդերային քաղաքականության ռազմավարության նպատակները, գերակայությունները և միջոցառումները և դրանք արտացոլվեն համապատասխան բյուջետային ծրագրերում՝ ներառելով գենդերային զգայուն արդյունքային ցուցանիշներ՝ ելնելով ՀՀ գենդերային քաղաքականության ռազմավարությամբ ակնկալվող արդյունքներից: Նշվածը հատկապես վերաբերում է այն պետական մարմիններին, որոնք հանդես են գալիս որպես 2019-2023թթ. գենդերային քաղաքականության ռազմավարության կամ գենդերային հավասարության / կանանց և երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված և ՀՀ կառավարության հավանությանն արժանացած այլ ծրագրերի և ռազմավարությունների գործողությունների ծրագրերի համար պատասխանատու մարմիններ: Այդ առումով, 2021թ. պետական բյուջեից սկսած, ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի նախագծը պետք է լինի գենդերային զգայուն՝ ներառելով համապատասխան չափելի արդյունքային ցուցանիշներ, որոնք կապված են գենդերային հավասարության ռազմավարության իրականացումն ապահովող ծրագրերի հետ:

Ինչպես նախորդ, այնպես էլ 2021 թ. բյուջետային գործընթացում նախատեսվում է, որ.

- ՀՀ պետական մարմիններն, իրենց 2021-2023թթ. ՄԺԾԾ (ներառյալ ՀՀ 2021թ. պետական բյուջեի) հայտերը կազմում են հիմք ընդունելով 2020-2022թթ. ՄԺԾԾ-ով 2021-2022թթ համար հաստատված ծախսային չափաքանակները, ընդ որում, այդ հայտերը ներկայացվում են միաժամանակ՝ մեկ ընդհանուր փաստաթղթով,

- հայտերում ծախսերի գծով առաջարկությունները ներկայացվում են ինչպես ամփոփ՝ ըստ ԲԳԿ-ի, այնպես էլ բացված՝ ըստ տվյալ ոլորտում ծրագրերի միջոցառումներն իրականացնող՝ ԲԳԿ չհանդիսացող կատարող մարմինների),

- հայտերում առանձնացվում են գոյություն ունեցող պարտադիր և հայեցողական պարտավորությունները, ինչը հնարավորություն կտա ողջ բյուջետային գործընթացում ծախսային պարտավորությունները դիտարկել և ծախսային քաղաքականության վերա-

բերյալ որոշումներն ընդունել հաշվի առնելով նաև այդ ծախսերի հետ կապված ՀՀ կառավարության հայեցողականության և ճկունության մակարդակը,

- հայտերում ներկայացված ծրագրերի շուրջ քննարկումների անցկացումն իրականացվում է երկու ուղղությամբ. (i) գոյություն ունեցող պարտադիր և առանձին շարունակական հայեցողական պարտավորությունների գծով ծրագրերի/միջոցառումների գծով ծախսերի քննարկում, որի արդյունքում որոշումներ են ընդունվում դրանց ճշգրտման վերաբերյալ, և (ii) մյուս բոլոր առաջարկների, այդ թվում քաղաքականության վերանայման կամ հայեցողական պարտավորությունների շարունակման վերաբերյալ, քննարկում ՀՀ վարչապետի մոտ, որի արդյունքում որոշում է կայացվում ոլորտային ծախսային քաղաքականության, ինչպես նաև հայեցողական պարտավորությունների շարունակման և քաղաքականության վերանայմանն առնչվող առաջարկների և դրանց առաջնահերթությունների վերաբերյալ,
- միջինժամկետ ոլորտային ծախսային քաղաքականության շարադրանքը կլինի շատ հակիրճ և իր մեջ կներառի միջինժամկետ ոլորտային ծախսային քաղաքականության հետ կապված բոլոր հարցերը (թիրախներ, գերակայություններ, պետության միջամտության ուղղություններ): Ինչպես և նախորդ տարում, յուրաքանչյուր ոլորտի ծախսային քաղաքականությունը անհրաժեշտ է շարադրել հնարավորինս հակիրճ (5-ից 6 էջի սահմաններում):
- ՄԺԾԾ և տարեկան բյուջեի նախագծի կազմման աշխատանքները կիրականացվեն զուգահեռաբար և ՄԺԾԾ փաստաթղթի հետ միասին կմշակվի նաև 2021թ. տարեկան բյուջեի նախագծի նախնական տարբերակը՝ որպես ՄԺԾԾ առաջին տարվա ծրագրի բացվածք,

Ի տարբերություն նախորդ գործընթացի, 2021թ. բյուջետային գործընթացի շրջանակներում, ԲԳԿ հանդիսացող պետական մարմինների նախաձեռնությամբ ՀՀ Աժ գլխադասային հանձնաժողովներում ՀՀ 2021թ. պետական բյուջեի նախագծի նախնական տարբերակում ներառված բյուջետային ծրագրերի շուրջ քննարկումները կիրականացվեն հուլիս ամսին՝ նախկինում օգոստոս ամսվա փոխարեն:

Միաժամանակ, բյուջետային գործընթացի մասնակցայնությունը բարձրացնելու նպատակով, նախատեսվում է, որ պետական մարմիններն, իրենց 2021-2023թթ.ՄԺԾԾ (ներառյալ 2021թ. պետական բյուջեի) հայտերը ՀՀ ՖՆ ներկայացնելուն զուգահեռ պետք է դրանք հրապարակեն իրենց ինտերնետային կայքերում, հայտերի շուրջ ապահովեն քննարկումներ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ և այդ քննարկումների արդյունքների վերաբերյալ ՀՀ ՖՆ ներկայացնեն տեղեկատվություն (ներառյալ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ ամփոփաթերթ):

## ՄԱՍ 1. ՀՀ 2021-2023 ԹԹ. ՄԺԾԾ ԵՎ ՀՀ 2021 Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 1.1 ՀՀ 2021-2023 թթ. ՄԺԾԾ որոշումները

ՀՀ 2021-2023 թվականների ՄԺԾԾ մշակման գործընթացը տրամադրում է մի մեխանիզմ, որով ՀՀ կառավարությունը կկայացնի ռազմավարական որոշումներ իր հարկաբյուջետային քաղաքականության մասին: Մասնավորապես, ՄԺԾԾ գործընթացի արդյունքում կսահմանվեն

- **Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները կամ նպատակները** այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են պետական բյուջեի եկամուտները, ծախսերը, պակասուրդի մակարդակը և պետական պարտքը:
- **Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները.** հաշվի առնելով երկարաժամկետ հարկաբյուջետային քաղաքականության նպատակները, ակնկալվող եկամուտների մակարդակը և ծախսերի անհրաժեշտությունը, ՀՀ կառավարությունը կորոշի ընդհանուր ծախսերի մակարդակը (և, հետևաբար, պակասուրդը) առաջիկա բյուջետային տարվա և ՄԺԾԾ ժամանակահատվածի հաջորդ երկու տարիների համար:
- **Ռազմավարական ծախսային գերակայությունները.** ՄԺԾԾ գործընթացում ոլորտային և ծախսային գերակայությունների սահմանումը թույլ կտա, որպեսզի ՀՀ 2021թ. պետական բյուջեի նախագծի կազմման գործընթացն ուղղորդվի համապատասխան մշակված քաղաքականությունների դաշտ:

- **Պետական մարմինների կողմից իրականացվող քաղաքականության նպատակները և դրանց իրագործման համար կիրառվող ռազմավարությունը.** ՄԺԾԾ գործընթացը հնարավորություն է տալիս պետական մարմիններին ներգրավվել պետության ռազմավարական նպատակների և ծրագրերի մշակման գործընթացում:

## 1.2. ՀՀ 2021թ. բյուջետային գործընթացի ժամանակացույցի ամփոփ նկարագիրը, պետական մարմիններին ներկայացվող հիմնական պահանջները և առանցքային ժամկետները

| Պետական մարմինների կողմից պատրաստվող փաստաթղթերը | Կատարման համար սահմանված ժամկետը |
|---|---|
| *Հայտատու մարմինների (յուրաքանչյուրը՝ իրեն վերապահված իրավասության մասով, ընդ որում ՀՀ տարածքային կառավարման մարմինները՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ համաձայնեցված) և ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՄԺԾԾ (ներառյալ ՀՀ 2021թ. պետական բյուջեի) նախագծի հիմքում դրվող բյուջետային մուտքերի, այդ թվում՝ բյուջետային եկամուտների առանձին եկամտատեսակներից և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի կանխատեսումները ներկայացնելը ՀՀ ՖՆ:* | *մինչև 2020 թ. փետրվարի 28–ը* |
| *Հայտատու մարմինների կողմից, հիմք ընդունելով 2020-2022թթ. ՄԺԾԾ-ով 2021-2022թթ. համար հաստատված ծախսային չափաքանակները և առաջնորդվելով ՀՀ ՖՆ կողմից տրամադրված մեթոդական ցուցումներով՝ իրենց 2021-2023թթ ՄԺԾԾ (ներառյալ ՀՀ 2021թ. պետական բյուջեի) հայտերը մշակելը և ներկայացնելը ՀՀ ՖՆ:* | *մինչև 2020թ. մարտի 2-ը (պարտադիր և շարունակական հայեցողական ծախսերի մասով՝ առանց նոր նախաձեռնությունների)*<br>*մինչև 2020թ. մարտի 16-ը (հայեցողական ծախսերի և նոր նախաձեռնությունների մասով)* |
| *ՀՀ ՖՆ և ՀՀ կենտրոնական բանկի աշխատողների մասնակցությամբ մակրոտնտեսական հարցերով համատեղ աշխատանքային խմբի կողմից ՄԺԾԾ (ներառյալ ՀՀ 2021թ. պետական բյուջեի) նախագծի հիմքում դրվող մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ առաջարկություններ մշակելը և ներկայացնելը ՀՀ ՖՆ* | *մինչև 2020թ. մարտի 16–ը* |
| *Հայտատու մարմինների կողմից ՀՀ 2021թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծի նախնական տարբերակում ներկայացված բյուջետային ծրագրերը ՀՀ ԱԺ գլխադասային հանձնաժողովներում քննարկելու ժամանակացույցերի մշակում և համապատասխան հանձնաժողովների հետ* | *մինչև 2020թ. ապրիլի 6-ը* |

| | |
|---|---|
| *համաձայնեցում:* | |
| *Հայտատու մարմինների կողմից ներկայացված ՄԺԾԾ (ներառյալ ՀՀ 2021թ. պետական բյուջեի) հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ քննարկումների անցկացում (ըստ անհրաժեշտության)* | *մինչև 2020թ. մայիսի 15-ը* |
| *ՄԺԾԾ հայտերի շուրջ ՀՀ վարչապետի մոտ կայացած քննարկման արդյունքներով Հայտատու մարմինների ավարտուն տեսքի բերված՝ ՄԺԾԾ-ի (ներառյալ ՀՀ 2021թ. պետական բյուջեի) հայտերի մշակում և ներկայացում (ներառյալ տարածքային կտրվածքով՝ առանձնացված ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի) ՀՀ ՖՆ:* | *մինչև 2020թ. մայիսի 22-ը* |
| *ՀՀ ԱԺ գլխադասային հանձնաժողովներում քննարկումների անցկացում հայտատու մարմինների և ՀՀ ՖՆ մասնակցությամբ, ՀՀ կառավարության կողմից հաստատած ՀՀ 2021թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծի նախնական տարբերակում ներկայացված բյուջետային ծրագրերի շուրջ:* | *մինչև 2020թ. հուլիսի 30-ը* |
| *ՀՀ 2021թ. «Քաղաքացու Բյուջե»-ի նախագծի լրամշակում և հանրայնացում* | *ՀՀ կառավարության կողմից 2021թ. պետական բյուջեի նախագծի վերջնական տարբերակը ՀՀ Ազգային ժողով ներկայացնելուն հաջորդող օրը* |

## 1.3 Հատուկ ցուցումներ և օրենսդրական հիմքեր՝ բյուջետային ծախսերի հաշվարկների կատարման համար

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով ծախսերի հաշվարկներն իրականացնելիս Հայտատուները պետք է առաջնորդվեն սույն ցուցումների Հավելված N 14-ում բերված իրավական հիմքերով և դրանք կատարեն վերջիններիս խիստ համապատասխան:

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ծախսերը և դրանց գծով հաշվարկները ներկայացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «Հայաստանի Հանրապետության բյուջետային ու հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5-Ն հրամանով:

Ընդ որում, ծախսերը տնտեսագիտական դասակարգմամբ ներկայացնելիս անհրաժեշտ է վերջիններս ներկայացնել Դաս/Կատեգորիա/Խումբ/Սինթետիկ մակարդակով:

Բյուջետային հայտերում բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման սուբսիդիաներ, դրամաշնորհներ (նվիրաբերություններ) հոդվածներով ծախսերի նախատեսման դեպքում անհրաժեշտ է հիմք ընդունել 2019 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշման 1.1 և 1.2 կետերով տրված սահմանումները: Ընդ որում, բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման դրամաշնորհներ հոդվածով առանց մրցույթի իրականացմամբ ծախսեր պլանավորելիս բյուջետային հայտերում անհրաժեշտ է հիմնավորել առանց մրցույթի ընթացակարգի կիրառման հատկացումների տրամադրման անհրաժեշտությունը:

Բյուջետային հայտերում պետական ծառայողական ավտոմեքենաների ձեռքբերման և շահագործման հետ կապված ծախսերի նախատեսման դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ վարչապետի № 02/04.5/5505-2019 հանձնարարականին ի լրումն տրված № 02/04.5/7658-2019 հանձնարարականով ներկայացված պահանջներով (կցվում է):

Բյուջետային հայտերում բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների և ծառայությունների ձեռքբերման (գնման) հոդվածներով ծախսերի

նախատեսման դեպքում, այդ ծախսերի հաշվարկներում ապրանքների և ծառայությունների գները հաշվարկելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ մոտեցմամբ՝

- այն դեպքում, երբ տվյալ ծրագրի միջոցառման գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար գները սահմանվում են համապատասխան կարգավորող մարմինների կողմից, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է ելնելով սահմանված սակագներից,
- այն դեպքում, երբ տվյալ ծրագրի միջոցառման գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար առկա են նախորդ տարիներից շարունակվող (գործող) պայմանագրեր, որոնք տարածվում են 2021թ.-ի վրա, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է ելնելով համապատասխան պայմանագրերով սահմանված գներից,
- այն դեպքում, երբ տվյալ ծրագրի միջոցառման գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար առկա չեն 2021թ.-ի վրա տարածվող պայմանագրեր, սակայն առկա են համապատասխան (գործող) պայմանագրեր 2020 թվականի համար, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է ելնելով 2020թ. համապատասխան պայմանագրերով սահմանված գներից,
- այն դեպքում, երբ տվյալ ծրագրի միջոցառման գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար չկան գործող պայմանագրեր, ապա այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է ելնելով 2019թ.-ի համապատասխան փաստացի գներից,
- տվյալ ծրագրի միջոցառման գծով համապատասխան ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար գործող պայմանագրերի, սահմանված սակագների և 2019թ.-ի համապատասխան փաստացի գների վերաբերյալ տեղեկատվության բացակայության դեպքում, այդ ապրանքի կամ ծառայության գինը որոշվում է ելնելով վերջինիս վերաբերյալ ՀՀ պաշտոնական վիճակագրության կամ այլ աղբյուրների հրապարակումներում առկա տեղեկատվությունից:

Բյուջետային հայտերում բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ցանկացած հոդվածով ծախսերի հաշվարկներին կից անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորումներ հստակ նշելով այդ հոդվածով ծախսերի հաշվարկման օրենսդրական կամ կանոնակարգային հիմքերը և գնագոյացման սկզբունքները, այդ թվում հաշվի առնելով ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբեր 26-ի N1919-Ն որոշման 4-րդ կետի 15-րդ ենթակետի ապահովման արդյունքում մշակված փաստաթղթերը:

Հանրային իշխանության և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի հաշվարկն անհրաժեշտ է ներկայացնել սույն մեթոդական ցուցումներին կից ներկայացված «9.2 karavarman_aparat2021-2023» ֆայլի աղյուսակներով (N1-ից մինչև N 30-ը): Ընդ որում Ձև N 30-ը լրացվում է  հանրային իշխանության և տարածքային կառավարման մարմինների համակարգում առկա բոլոր կազմակերպությունների համար՝ անկախ պետական բյուջեում վերջիններիս գծով ֆինանսավորման առկայությունից:

## ՄԱՍ 2. 2021-2023 ԹԹ. ՄԺԾԾ (ՆԵՐԱՌՅԱԼ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ) ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

2021-2023թթ ՄԺԾԾ (ներառյալ ՀՀ 2021թ. բյուջետային ֆինանսավորման) հայտի հիմնական նպատակն է ներկայացնել պետական մարմնի համակարգի (բնագավառի) ծախ-

սային ռազմավարությունը հաջորդ երեք տարվա համար և առաջիկա տարվա պետական բյուջեի ծախսային ծրագրերի և միջոցառումների ֆինանսական գնահատականը: Տվյալ ռազմավարությունը ներառում է միջնաժամկետ հատվածում նախատեսված ծրագրերը և միջոցառումները, և թե ինչպես են դրանք նպաստելու պետական մարմնի առաքելության և նպատակների, ինչպես նաև ՀՀ կառավարության ծրագրով սահմանված նպատակների և թիրախների իրագործմանը: Հայտում պետք է ներկայացնել նաև նախատեսված ծրագրերի և միջոցառումների ֆինանսական գնահատականը և հիմնավորել դրանք:

Պետական մարմնի հայտը բոլոր փուլերում (ինչպես նախնական, այնպես էլ ավարտուն տեսքի բերված) ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվում մեկ ամբողջական փաստաթղթի տեսքով՝ հայտատուի ղեկավարի կողմից ստորագրված ուղեկցող գրությամբ:

Հայտում ներկայացվում են պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի և միջոցառումների գծով 2021թ. ծախսերի հաշվարկները և 2022-2023թթ. ծախսերի գնահատականները: Ընդ որում, 2021թ. համար տեղեկատվությունը պետք է ներկայացվի մանրամասն՝ պետական բյուջեի շրջանակներում պետական մարմնի կողմից իրականացման ենթակա ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ մանրամասն հաշվարկ-հիմնավորումների հետ միասին՝ բացված ըստ առանձին ծախսատեսակների: Հայտը ներկայացնելիս, որպես կողմնորոշիչ չափաքանակներ պետք է դիտարկվեն ՀՀ 2020-2022թթ. ՄԺԾԾ-ով 2021 և 2022 թվականների համար հաստատված ծախսային չափաքանակները, իսկ 2023թ. ծախսերի համար որպես կողմնորոշիչ չափաքանակներ անհրաժեշտ է դիտարկել ՀՀ 2020-2022թթ. ՄԺԾԾ-ով 2022թ. համար հաստատված ծախսային չափաքանակները:

Ընդ որում, հայտում պետք է ներկայացվեն պետական մարմնի կողմից իրականացվող բոլոր (ինչպես բյուջետային, այնպես էլ ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող) ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերը: Արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի և միջոցառումների գծով հայտերում տեղեկատվությունը ներկայացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել սույն մեթոդական ցուցումներով բյուջետային ծրագրերի և միջոցառումների համար սահմանված պահանջներով:

Ստորև ներկայացված է 2021-2023թթ. ՄԺԾԾ (ներառյալ 2021թ. բյուջետային ֆինանսավորման) հայտի օրինակելի ձևը, որում բացատրվում է, թե ինչ է անհրաժեշտ ներկայացնել վերջինիս յուրաքանչյուր բաժնում:

Հայտի շրջանակներում բյուջետային ծրագրերը և միջոցառումները, ինչպես նաև դրանց գծով արդյունքային ցուցանիշները սահմանելիս, անհրաժեշտ է առաջնորդվել սույն մեթոդական ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող *«Ծրագրային բյուջետավորման ձևաչափով բյուջետային ծրագրերի և միջոցառումների սահմանման», ինչպես նաև «Ծրագրային բյուջետավորման ձևաչափով բյուջետային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների սահմանման» մեթոդական ձեռնարկներով*, որոնք հաստատվել են ՀՀ ՖՆ 2017թ. հունիսի 23-ի N 311-Ա հրամանով:

Միաժամանակ, բյուջետային գործընթացի շրջանակներում բյուջետային հայտերի ներկայացման համար սահմանված պահանջներում կատարված փոփոխություններով՝ մասնավորապես բյուջետային հայտերում բյուջետային ծախսերի հիմքում դրված պարտավորությունների բնույթի (պարտադիր և հայեցողական պարտավորություններ) բացահայտման անհրաժեշտությամբ պայմանավորված, առաջանում է բյուջետային ծրագրերի անձնագրերի վերանայման անհրաժեշտություն: Հետևաբար, Հայտատու պետական մարմինները բյուջետային հայտերի հետ մեկտեղ ՀՀ ՖՆ պետք է ներկայացնեն նաև իրենց բոլոր բյուջետային ծրագրերի (բացառությամբ վարչական բնույթի ծախսային ծրագրերի) վերանայված նկարագրերը (անձնագրեր) սույն մեթոդական ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 13-ով ներկայացված ձևաչափին համապատասխան:

Միաժամանակ հայտերը կազմելիս, որպես ելակետ անհրաժեշտ է ընդունել ՀՀ վարչապետի 19.02.2019թ. թիվ 02/04.2/7794-2019 հանձնարարականը, հաշվի առնելով նաև վարչապետի մոտ 13.04.2019թ. և 18.05.2019թ. կայացած քննարկման արդյունքները և դրանց հիման վրա տրված հանձնարարականները (արձանագրություններ՝ N ԿԱ/55-2019 և N ԿԱ/75-2019):

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

| |
|---|
| *<Լրացնել պետական մարմնի անվանումը>*[1] |

# 2021-2023

## ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

# ԵՎ 2021

## ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

[1] *Փաստաթղթի լրացման համար անհրաժեշտ ցուցումները ներկայացված են շեղատառերով: Ցուցումները չպետք է ներառվեն ներկայացվող հայտում:*

## 1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

*Ներկայացնել տվյալ պետական մարմնի պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով առնվազն վերջին երեք տարիների (2018–2020թթ.) զարգացման միտումները ինչպես ոչ ֆինանսական, այնպես էլ ֆինանսական ցուցանիշների մակարդակով:*

*Մասնավորապես անհրաժեշտ է ներկայացնել առանցքային փոփոխությունները ծրագրերի շրջանակներում պետության կողմից իրականացվող հիմնական միջամտությունների (օրինակ՝ մատուցվող ծառայությունների) կառուցվածքում, ինչպես նաև հիմնական ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների դինամիկան վերջին երեք տարիների համար (օրինակ՝ կիրառելով աճի տեմպեր) և դրանց բացատրությունները:*

*Վերոհիշյալ վերլուծությունները պետք է հնարավորինս ներառեն ոլորտում առկա և / կամ ծրագրերի և ծառայությունների իրականացման հետ կապված գենդերային խնդիրները և լինեն հնարավորինս հակիրճ՝ շեշտադրումը դնելով առավելապես թվային գնահատականների վրա:*

*Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այն ծրագրերի/միջոցառումներին, որոնց գծով հայտի հետագա հատվածներում ներկայացվում են խնդիրներ և նախատեսվում են էական փոփոխություններ ՄԺԾԾ ժամանակահատվածում ինչպես դրանց իրականացման (մատուցման) ձևերում, այնպես էլ հիմնական ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների առումով:*

*Հայտի այս հատվածը հնարավորության դեպքում չպետք է գերազանցի 2 էջի սահմանները:*

## 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

*Ներկայացնել ՄԺԾԾ ժամանակահատվածում պետական մարմնի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառ(ներ)ում քաղաքականության հիմնական նպատակները և թիրախները: Նպատակները սահմանելիս անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ այդ նպատակները պետք է կապվեն ՄԺԾԾ ժամանակահատվածում պետական մարմինի կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի հետ և բխեն ՀՀ կառավարության քաղաքականության ընդհանուր նպատակներից և թիրախներից:*

*Նպատակները պետք է լինեն շարունակական ու կայուն՝ առնվազն միջնաժամկետ հատվածում, իսկ դրանց ձևակերպումը պետք է լինի հստակ և հնարավորինս սեղմ 1-2 նախադասությամբ: Հնարավորության սահմաններում յուրաքանչյուր նպատակի նկարագրության հետ միասին պետք է ներկայացվեն նաև դրանց գծով վերջնական արդյունքի չափորոշիչներ և թիրախային ցուցանիշներ: Ըստ անհրաժեշտության՝ հարկ է ներառել նաև ՀՀ գենդերային քաղաքականության գերակայություններից և դրան առնչվող ծրագրերից բխող նպատակներ, նկարագրություններ և արդյունքային ցուցանիշներ (այդ թվում՝ շահառուներին վերաբերող սեռով տարանջատված ցուցանիշներ և թիրախներ):*

*Քաղաքականության նպատակների և թիրախների մասին տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփել ստորև ներկայացված աղյուսակում[2]:*

<table>
<tr><th rowspan="3">Նպատակը</th><th rowspan="3">Ծրագրի դասիչը և անվանումը</th><th colspan="5">Ծրագրի վերջնական արդյունքները</th><th rowspan="3">Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ</th></tr>
<tr><th rowspan="2">Չափորոշիչը</th><th colspan="2">Ելակետը</th><th colspan="2">Թիրախը</th></tr>
<tr><th>Ցուցա-նիշը</th><th>Ժամ-կետը</th><th>Ցուցա-նիշը</th><th>Ժամ-կետը</th></tr>
</table>

[2] *Աղյուսակի ձևաչափը և դրա լրացման մանրամասն պահանջները ներկայացված են սույն մեթոդական ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 3-ում*

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| | | | | | | | |
| … | … | … | | | | | |

*Հայտի այս հատվածը հնարավորության դեպքում չպետք է գերազանցի 2 էջի սահմանները:*

## 3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

*Ներկայացնել ոլորտային քաղաքականության նպատակների և թիրախների ապահովման նպատակով ՄԺԾԾ ժամանակահատվածում պետական մարմնի կողմից իրականացվող հիմնական ծախսային ուղղություններն և դրանց միջև գերակայությունները:*

*Անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ ծախսային գերակայությունների սահմանումը ենթադրում է, որ ՄԺԾԾ ժամանակահատվածում բնագավառին հատկացվելիք լրացուցիչ միջոցներն առաջին հերթին բաշխվելու են առավել գերակա ուղղությունների միջև:*

*Այդ նպատակով, անհրաժեշտ է առանձնացնել ՄԺԾԾ ժամանակահատվածում բնագավառում իրականացվելիք ծախսերի առավել գերակա 4-5 ուղղությունները և դրանք ներկայացնել ստորև բերված աղյուսակում: Վերջիններս պետք է ներկայացվեն կոնկրետ միջոցառումների տեսքով, ըստ գերակայությունների նվազման հաջորդականության:*

*Անհրաժեշտ է հիմնավորել գերակայությունների սահմանման տրամաբանությունը՝ այդ թվում սահմանված նպատակների և թիրախների ապահովման նպատակով լուծման կամ կարգավորման ենթակա խնդիրների առաջնահերթությամբ, որոնք իրենց հերթին պետք է հիմնավորվեն ՀՀ կառավարության ոլորտային քաղաքականության միտումներով:*

| Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման) | Հիմնավորումներ |
|---|---|
| | |
| … | |

*Հայտի այս հատվածը հնարավորության դեպքում չպետք է գերազանցի 1 էջի սահմանները:*

*Միաժամանակ, Հայտատու մարմինները, ի լրումն վերոհիշյալ տեղեկատվության, պետք է ներկայացնեն նաև ՄԺԾԾ հատվածում պետական մարմնի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառ(ներ)ի գծով կառավարության ծախսային քաղաքականության հակիրճ շարադրանքը՝ սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 12-ով ներկայացված ձևաչափին համապատասխան:*

## 4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

### 4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

*Հայտում՝ գոյություն ունեցող պարտավորությունների և նոր նախաձեռնությունների վերաբերյալ առաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել խմբավորված՝ ըստ այդ միջոցառումների*

*շրջանակներում իրականացվող ծախսերի հիմքում դրված պարտավորությունների բնույթի: Այդ առումով, միջոցառումներն անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ խմբավորմամբ.*

*1) **<u>Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ:</u>** Պարտադիր ծախսեր են հանդիսանում ՀՀ օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված՝ պետության կողմից ապրանքների փրամադրման, ծառայությունների մատուցման կամ պետության միջամտության այլ ձևերի հետ կապված պարտավորությունների իրականացման համար պահանջվող ծախսերը: Պարտադիր ծախսերի օրինակներ են հանդիսանում պետության կողմից երաշխավորված պարտադիր ծառայությունների (օրինակ՝ պետական ուսումնական հաստատություններում ընդհանուր միջնակարգ կրթության գծով ծառայությունները), սոցիալական տրանսֆերտների (օրինակ՝ պետական կենսաթոշակները) տրամադրման ծախսերը և այլն: Ծախսերի պարտադիր լինելու հանգամանքը որոշվում է ՀՀ կառավարության համար այդ ծախսերի հիմքում դրվող պարտավորություններն իրականացնելու (ծառայությունները մատուցելու, տրանսֆերտները հատկացնելու և այլն) և դրա նպատակով բյուջետային ծախսեր նախատեսելու պարտավորության պարտադիր լինելու հանգամանքով: Այս դեպքում, կառավարությունը չի կարող իր հայեցողությամբ հրաժարվել համապատասխան պարտավորությունների կամ դրանց մի մասի իրականացումից: Նման դեպքերում պահանջվում է համապատասխան օրենքների կամ միջազգային պայմանագրերով սահմանված պարտավորությունների վերանայում:*

*Թեև գործնականում պարտադիր պարտավորությունների իրականացման հարցում ՀՀ օրենքներով և միջազգային պայմանագրերով կառավարությանը կարող են վերապահել որոշ հայեցողական իրավասություններ (օրինակ՝ ծառայությունների մատուցման կարգի սահմանում, շահառուների կոնկրետ կատեգորիաների հստակեցում, տարեկան ֆինանսավորման չափերի որոշում և այլն), այնուամենայնիվ, այդ իրավասությունները և դրանց շրջանակները, որպես կանոն, հստակ սահմանվում են օրենքներով և չեն կարող վերաբերվել այդ պարտավորությունների դադարեցման շուրջ որոշումներին (ցանկացած դեպքում, պարտադիր պարտավորությունները ենթակա են իրականացման և ֆինանսավորման): Պարտադիր պարտավորությունների շրջանակներում գործադիր մարմնին վերապահված նման հայեցողական իրավասությունները նույնպես դիտարկվում են որպես պարտադիր պարտավորությունների մաս:*

*2) **<u>Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ:</u>** Հայեցողական ծախսեր են հանդիսանում ՀՀ կառավարության որոշումներով կամ գերատեսչությունների կողմից սահմանված՝ պետության կողմից ապրանքների տրամադրման, ծառայությունների մատուցման կամ պետության միջամտության այլ ձևերի հետ կապված պարտավորությունների իրականացման համար պահանջվող ծախսերը: Որպես կանոն, հայեցողական պարտավորությունների իրականացման մասով գործադիր մարմնի իրավասությունները/լիազորությունները սահմանվում են օրենքներով, սակայն դրանք չեն պարտադրում այդ պարտավորությունների իրականացումը: Ի լրումն դրան, հայեցողական պարտավորությունները կարող են նաև ինքնուրույնաբար նախաձեռնվել գործադիր մարմնի կողմից՝ նպատակ ունենալով ոլորտային քաղաքականության շրջանակներում ընդլայնել և բարելավել հանրությանը մատուցվող ծառայությունները: Հայեցողական պարտավորությունների դեպքում, յուրաքանչյուր տարի կարող է հարցականի տակ դրվել նման միջոցառումների/ծառայությունների իրականացման նպատակահարմարությունը: Հայեցողական պարտավորությունների օրինակ է հանդիսանում դպրոցական միջազգային օլիմպիադաների իրականացումը, մարզային մշակութային միջոցառումների իրականացումը և այլն:*

*Ի տարբերություն պարտադիր պարտավորությունների, հայեցողական պարտավորությունների դեպքում կառավարությունը կարող է իր հայեցողությամբ (որոշմամբ) հրաժարվել այդ*

*պարտավորությունների և դրանց հետ կապված հայեցողական ծախսերի իրականացումից՝ առանց ՀՀ օրենքներում և միջազգային պայմանագրերում փոփոխություններ կատարելու:*

*Միաժամանակ, հայտերում Հայեցողական ծախսերին առնչվող միջոցառումները ներկայացնելիս, անհրաժեշտ է անձնացված ներկայացնել* ***Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումները:*** *Վերջիններս ներառում են 2020-2022 ՄԺԾԾ-ով և/կամ 2020թվականի ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված և 2021-2023թթ ՄԺԾԾ ժամանակահատվածում շարունակվող Հայեցողական ծախսերին առնչվող այն միջոցառումները, որոնց ֆինանսավորման դադարեցումը ՄԺԾԾ ժամանակահատվածում այդ միջոցառման շրջանակներում նախորդ տարիներին կատարված ծախսերը ուղղակիորեն դարձնում է ոչ արդյունավետ: Նմանատիպ ծախսերի օրինակ են հանդիսանում նախորդ բյուջետային տարիներին մեկնարկած և ՄԺԾԾ ժամանակահատվածում շարունակվելիք մեկից ավելի տարիներ տևող կապիտալ շինարարության գծով միջոցառումները:*

*Բյուջետային ծրագրերի միջոցառումներն ըստ ծախսերի հիմքում դրված պարտավորությունների բնույթի դասակարգելիս, անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ միևնույն միջոցառման շրջանակներում չեն կարող միաժամանակ ներառվել պարտադիր և հայեցողական բնույթի ծախսեր: Նման դեպքերի առկայության պարագայում անհրաժեշտ է վերանայել համապատասխան միջոցառումների կառուցվածքը և բովանդակությունը:*

*Պարտադիր և հայեցողական ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփել ստորև ներկայացված աղյուսակում.*

| Դասիչը | | Միջոցառման անվանումը | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը[3] | Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները[4] | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը[5] |
|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | Միջոցառում | | | | |
| Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| | | | | | |
| | | | | | |
| Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին չդասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

## 4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

*Սույն փաստաթղթի իմաստով գոյություն ունեցող ծախսային պարտավորություններ են համարվում ՀՀ 2020-2022 թվականների պետական ՄԺԾԾ-ով կամ «Հայաստանի*

*[3] Ներկայացվում է համապատասխան միջոցառման շրջանակներում իրականացվող պարտադիր (պարտադիր ծախսերին դասվող միջոցառումների դեպքում) կամ հայեցողական (հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների դեպքում) պարտավորությունների համառոտ նկարագիրը՝ այդ թվում մատուցվող ծառայությունների, տրամադրող տարնսֆերտների և շահառուների շրջանակը:*

*[4] Սյունակը լրացվում է միայն պարտադիր ծախսերին դասվող միջոցառումների համար:*

*[5] Սյունակում կատարվում են հղումներ պատադիր ծախսային պարտավորությունները սահմանող օրենքների և միջազգային պայմանագրերի կոնկրետ դրույթների վրա, իսկ այդ պարտավորությունների շրջանակներում գործադիր մարմին վերապահված հայեցողական իրավասությունների դեպքում՝ նաև այդ իրավասությունները սահմանող իրավական ակտերի վրա: Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների դեպքում կատարվում են հղումներ այդ ծախսային պարտավորությունները սահմանող իրավական ակտերի վրա:*

*Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված ծախսային պարտավորությունները:*

*Համառոտ նկարագրել, թե ինչպես են գոյություն ունեցող ծրագրերը/միջոցառումները (ծախսային պարտավորությունները) նպաստում ընդհանուր նպատակների և գերակայությունների իրականացմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է նկարագրել ծրագրերից յուրաքանչյուրի գծով նպատակները և թիրախային վերջնական արդյունքները և թե ինչպես են դրանք նպաստելու ՀՀ կառավարության ծրագրով սահմանված կոնկրետ նպատակների և քաղաքականության թիրախների ապահովմանը: Նշված տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփ տեսքով ներկայացնել սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 3-ով ներկայացված համապատասխան աղյուսակում:*

*Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գծով ծախսերի հաշվարկներն իրականացվում են հետևյալ հաջորդական փուլերով.*

***1. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների ճշգրտում**՝ հիմք ընդունելով այդ ծախսերի գծով 2019 թվականի փաստացի փարեկան կատարողականը, ինչպես նաև հայտատուից անկախ պատճառներով ծախսային գործոնների փոփոխությամբ պայմանավորված ազդեցությունները ծախսերի վրա:*

*Այդ առումով, որպես ծախսային գործոններ պետք է դիտարկվեն այն գնային և ոչ գնային գործոնները, որոնց վերաբերյալ արված ենթադրություններում (կանխատեսվող ցուցանիշներում) հայտատուից անկախ պատճառներով տեղի են ունեցել այնպիսի փոփոխություններ, որոնք չեն հանգեցնում գոյություն ունեցող ծախսային ծրագրերի միջոցառումների (ծառայությունների) և/կամ շահառուների շրջանակի փոփոխության, սակայն հանգեցնում են այդ ծրագրերի/միջոցառումների գծով ծախսերի փոփոխության:*

*Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների ճշգրտման համար որպես ծախսային գործոններ են դիտարկվում նաև հայտատուից անկախ պատճառով առաջացած (ի հայտ եկած) այնպիսի գործոնները, որոնք հանգեցնում են ծրագրի միջոցառումների (ծառայությունների) և/կամ շահառուների շրջանակի նվազեցմանը:*

***2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գծով ծախսային խնայողությունների ուղղությամբ առաջարկների ներկայացում** և դրա հիման վրա գոյություն ունեցող (1-ին փուլում ճշգրտված) ծախսային պարտավորությունների վերանայում:*

*Բոլոր հայտատու մարմինները պետք է միջոցներ ձեռնարկեն իրենց կողմից իրականացվող բյուջետային ծրագրերի միջոցառումների ծախսային արդյունավետության բարձրացման ուղղությամբ:*

*Այդ նպատակով, հայտերում պետք է ներկայացվեն նաև առաջարկներ ծախսային խնայողությունների վերաբերյալ:*

*Սույն փաստաթղթի իմաստով գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսային խնայողություն է համարվում համապատասխան միջոցառումների իրականացման նպատակով ծախսվող ֆինանսական միջոցների նվազեցումը՝ այդ միջոցառումների գծով քանակական և որակական ցուցանիշների անփոփոխ մնալու պայմաններում, որը հետևանք է այդ միջոցառումների շրջանակներում ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման և այլ միջամտությունների իրականացման նպատակով կիրառվող ռեսուրսների և դրանց սպառման մակարդակների փոփոխության:*

*Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսային խնայողության վերաբերյալ առաջարկները կարող են վերաբերվել կիրառվող ռեսուրսների սպառման ծավալների փոփոխությանը (օրինակ՝ օգտագործվող թղթի ծավալների կրճատում ի հաշիվ էլեկտրոնային*

*նամագրության ներդրման), կիրառվող ռեսուրսների տեսակներում (համախմբությունում) փոփոխությանը, ինչպես նաև արտադրելու կամ գնելու այլընտրանքի կիրառմանը, որոնք հանգեցնում են այդ միջոցառումների գծով ծախսերի նվազեցման:*

*Ընդ որում, խնայողություններ չեն համարվում ծախսվող ֆինանսական միջոցների նվազեցումները, որոնք պայմանավորված են միջոցառման շրջանակներում սպառվող ռեսուրսների գների իջեցմամբ (կամ վերանայմամբ) կամ միջոցառման գծով արդյունքային (քանակական, որակական և այլ) ցուցանիշների կրճատմամբ(նվազեցմամբ):*

*Հայտատու մարմինները գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկությունները պետք է ներկայացնեն սույն մեթոդական ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 1-ի աղյուսակ 3-ով ներկայացված ձևաչափին համապատասխան:*

*Գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով ծախսակազմումներն (ծախսերի մանրամասն հաշվարկներն) ու հիմնավորումներն ըստ առանձին գործոնների անհրաժեշտ է ներկայացնել սույն ցուցումներին առանձին առդրված ծախսերի հաշվարկների մանրամասն ձևաչափերին համապատասխան: Ընդ որում, յուրաքանչյուր միջոցառման գծով ծախսակազմումների վերաբերյալ անհրաժեշտ է ներկայացնել նաև ամփոփ տեղեկատվություն սույն մեթոդական ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 1-ով սահմանված «Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ամփոփ ձևաչափերին» համապատասխան:*

*Գոյություն ունեցող բոլոր ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսերն ու ակնկալվող արդյունքներն անհրաժեշտ է ներկայացնել նաև ամփոփ տեսքով՝ սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 3-ով ներկայացված ձևաչափերին համապատասխան: Այդ ծրագրերի/միջոցառումների գծով ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգումների մանրամասների անհրաժեշտ է ներկայացնել սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելվածներ 4-ով և 5-ով ներկայացված ձևաչափերին համապատասխան:*

*Գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների համար նշված ձևաչափերն օգտագործելիս դրանցում չպետք է ներառվեն նոր նախաձեռնությունների գծով ծախսերը:*

## 4.3. Նոր նախաձեռնությունները

*Սույն փաստաթղթի իմաստով նոր նախաձեռնություններ են համարվում այն ծախսային առաջարկները, որոնք վերաբերվում են գոյություն ունեցող (ՀՀ 2020-2022թթ. պետական ՄԺԾԾ-ով կամ «ՀՀ 2020թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված) ծախսային պարտավորությունների գծով ծրագրերի/միջոցառումների (օրինակ՝ ծառայությունների) և/կամ շահառուների շրջանակի ընդլայնմանը՝ այսինքն, երբ հաստատված ծառայությունների շրջանակից դուրս առաջարկվում է մատուցել նոր ծառայություններ և/ կամ հաստատված ծառայությունները տարածել շահառուների նոր խմբերի վրա:*

*Համառոտ նկարագրել ծախսային նոր նախաձեռնությունները և ինչպես են դրանք նպաստելու պետական մարմնի առաքելության, ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է նկարագրել նոր նախաձեռնություններից բխող ծրագրերից/միջոցառումներից յուրաքանչյուրի գծով նպատակները և թիրախային վերջնական արդյունքները և թե ինչպես են դրանք նպաստելու ՀՀ կառավարության ծրագրով սահմանված կոնկրետ նպատակների և քաղաքականության թիրախների ապահովմանը:*

*Նոր նախաձեռնությունների ձևակերպման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել գենդերային քաղաքականության ռազմավարությամբ և գենդերային / կանանց ու երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված ազգային ծրագրերով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման անհրաժեշտությունը:*

*Նշված տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփ տեսքով ներկայացնել սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 3-ով ներկայացված համապատասխան աղյուսակում:*

*Անհրաժեշտ է բացատրել, թե նոր նախաձեռնությունների իրականացումը ինչ նոր բյուջետային ծրագիր (ծրագրեր) և միջոցառումներ կպահանջի կամ գոյություն ունեցող ծառայությունների գծով ինչ նոր շահառուների խմբեր կընդգրկի: Պետք է նկարագրել նաև, թե ինչպես են դրանք նպաստելու պետական մարմնի առաքելության և ՀՀ կառավարության ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը (կատարել հղումներ համապատասխան փաստաթղթերին): Եթե նոր նախաձեռնությունները պայմանավորված են օրենսդրության փոփոխությամբ կամ ռազմավարական և քաղաքական որոշումներով, ապա անհրաժեշտ է հղում կատարել համապատասխան փաստաթղթերին (դրույթներին):*

*Այն դեպքերում, երբ նախատեսվում է նոր ծրագրի իրականացում (այլ ոչ թե գոյություն ունեցող ծրագրերի ընդլայնում), ապա անհրաժեշտ է մանրամասն շարադրել այն ենթադրությունները, որոնք հիմնավորում են տվյալ որոշումը:*

*Եթե նախատեսվում է նոր նախաձեռնություն գործող պարտավորությունների դադարեցման կամ կրճատման հաշվին, սակայն պահանջվում է համապատասխան նոր իրավական հիմքերի ստեղծում և չի կարող կատարվել միայն պետական մարմնին գործող օրենսդրությամբ վերապահված իրավասության շրջանակներում իրականացվող ներքին ընթացակարգերի միջոցով, ապա անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան բացատրություններ և հիմնավորումներ:*

*Նոր նախաձեռնություններից յուրաքանչյուրի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներկայացնել առանձին հավելվածի տեսքով՝ սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 2-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:*

*Նոր նախաձեռնությունների (ներառյալ այլընտրանքների) գծով ծախսակազմումներն անհրաժեշտ է իրականացնել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներին» համապատասխան: Մասնավորապես ծախսակազմումն իրականացնելիս անհրաժեշտ է հստակ ներկայացնել համապատասխան այլընտրանքներից յուրաքանչյուրի գծով ծախսերի օբյեկտները, առնչվող ծախսերն ու դրանց դասակարգումները և ծախսերի վերգրման համար կիրառվող մոտեցումները: Ծախսակազմման փաստաթղթերը/ֆայլերը պետք է հանդիսանան հայտի բաղկացուցիչ մասը և հայտի հետ միասին սահմանված կարգով ներայացվեն ՀՀ ՖՆ:*

*Պետք է մանրամասն շարադրել այն ենթադրությունները, որոնք ընկած են համապատասխան առաջարկների ֆինանսական գնահատականների հիմքում, ներկայացնել նաև համապատասխան հաշվարկներ, ինչպես նաև ներկայացնել նոր ծրագրերի/միջոցառումների իրականացման կամ շահառուների նոր խմբերի ներառման արդյունքում ակնկալվող առավելությունները և օգուտները: Այն դեպքերում, երբ նոր նախաձեռնությունների գծով ենթադրվում է ծառայությունների կամ շահառուների փոքր շրջանակի համար փորձնական ծրագրերի իրականացում, ապա հայտում անհրաժեշտ է կատարել նշում այդ մասին:*

*Նոր նախաձեռնությունների գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում առաջարկվող ծախսերն ու ակնկալվող արդյունքներն անհրաժեշտ է ներկայացնել նաև ամփոփ տեսքով՝ սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 3-ով ներկայացված ձևաչափերին համապատասխան: Ծրագրերի/միջոցառումների գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի*

*տնտեսագիտական և գործառական դասակարգումների մանրամասների անհրաժեշտ է ներկայացնել՝ սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելվածներ 4-ով և 5-ով ներկայացված ձևաչափերին համապատասխան: Նոր նախաձեռնությունների համար նշված ձևաչափերն օգտագործելիս դրանցում չպետք է ներառվեն գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով ծախսերը:*

*Անհրաժեշտ է թվարկել նոր նախաձեռնությունների ֆինանսավորման հավանական այլընտրանքային աղբյուրները՝ այլ աղբյուրներ կամ խնայողություններ այլ ծրագրերից: Ֆինանսավորման այլ հավանական աղբյուրի առկայության կամ այլ ծրագրերում խնայողություններ ակնկալելու դեպքում, այդ տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփ տեսքով ներկայացնել առանձին աղյուսակում սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 6-ում ներկայացված աղյուսակ 1-ի ձևաչափին համապատասխան:*

*Անհրաժեշտ է ներկայացնել նաև նոր նախաձեռնությունների ֆինանսավորման առաջնահերթությունները՝ սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 6-ում ներկայացված աղյուսակ 2-ի ձևաչափին համապատասխան:*

## 5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

*Համառոտ ներկայացնել հայտատու մարմնի, ինչպես նաև վերջինիս ենթակայությամբ գործող պետական կազմակերպությունների կողմից 2021-2023թթ. իրականացվելիք ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում սպասվող եկամուտների աղբյուրները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)՝ սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 7-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:*

## 6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

*Նկարագրել ըստ մարզերի, թե ինչպես են բյուջետային ծրագրերը/միջոցառումները նպաստելու ՀՀ տարածքային զարգացման ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը, որքանով են համահունչ ՀՀ կառավարության որդեգրած զարգացման՝ քաղաքականությանը : Առաջարկվող ծախսային ծրագրերի հայտկացումները ներկայացնել նաև տարածքային (ըստ մարզերի) բացվածքով (Հավելված 8-ին համապատասխան), որոնց կից պետք է ներկայացվեն համապատասխան բացատրական-վերլուծական տեղեկատվություն: Հարկ է նկատի ունենալ, որ հավելված 8-ին համապատասխան տեղեկատվությունը ներկայացվում է երկու անգամ՝ առաջինը հայտերի հետ միասին և երկրորդ անգամ ՀՀ պետական բյուջեն ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում:*

## 7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

*Համառոտ նկարագրել արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերը/միջոցառումները և այդ ֆինանսական ռեսուրսների ստացման աղբյուրները (առանձին ցույց տալով նաև այդ ծրագրերի/միջոցառումների գծով ՀՀ կառավարության համաֆինանսավորման չափաքանակները): Այդ առումով, ի լրումն սույն օրինակելի ձևի 4, 5 և 6-րդ կետերով պահանջվող տեղեկատվության, այդ ծրագրերի/միջոցառումների վերաբերյալ*

*տեղեկատվությունն անհրաժեշտ է ամփոփ ձևով ներկայացնել նաև սույն ցուցումների ՄԱՍ 3-ի հավելված 9-ում ներկայացված աղյուսակների ձևաչափերին համապատասխան:*

*Ծրագրերի նկարագրությունները պետք է լինեն բովանդակային՝ համապատասխան հաշվարկներով հիմնավորված:*

*Բովանդակային բացատրագրերում առնվազն պետք է ներառվեն ծրագրերի գծով ըստ գնումների պլանի ընթացիկ (ԾԻԳ-երի պահպանման ծախսերի՝ ներառյալ հասփիքացուցակով նախատեսվող աշխատավարձի ֆոնդի և աշխատողների թվաքանակի, խորհրդատվական աշխատանքների և այլ ընթացիկ ծախսերի) և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (այդ թվում ըստ օբյեկտների շինարարության, նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության և ապրանքների ձեռքբերման մրցույթների փուլերի, և այլ կապիտալ ծախսերի) ընթացքի և կանխատեսումների վերաբերյալ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներով տեղեկատվական և վերլուծական դրույթներն ըստ ծրագրերի բաղադրիչների, այդ թվում՝*

*ա/ շինարարական և այլ աշխատանքների գծով՝ իրականացվելիք աշխատանքներն ըստ օբյեկտների, նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայությունը կամ բացակայությունը, մրցույթի ընթացքը, կապալի պայմանագրի առկայությունը, շինարարական աշխատանքների ավարտը և կանխատեսումների հիմքում դրված ենթադրությունները,*

*բ/ ապրանքների և նյութերի ձեռքբերման գծով՝ ապրանքների տեսականին, անհրաժեշտությունը և նպատակը, ձեռքբերման մրցույթի ընթացքը, կանխատեսման հիմքում դրված ենթադրությունները,*

*գ/ տեխնիկական աջակցության և խորհրդատվության գծով՝ ձեռքբերման անհրաժեշտությունը և նպատակը, նախատեսված ծախսի հաշվարկ-հիմնավորումը, տեխնիկական առաջադրանքների (TOR-երի) առկայությունը, մրցույթի ընթացքը, ծառայության մատուցման ավարտը, կանխատեսման հիմքում դրված ենթադրությունները,*

*դ/ կառավարման կամ ԾԻԳ-երի պահպանման ծախսերի գծով՝ նախատեսված ծախսերի անհրաժեշտությունը, նպատակը, ուղղվածությունը և համապատասխան պարզաբանումները:*

*Ի լրումն այդ տեղեկատվության, անհրաժեշտ է ներկայացնել նաև տվյալ ծրագրերն իրականացնող գրասենյակների (ԾԻԳ-երի) պահպանման ծախսերի նախահաշիվները՝ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող ձևաչափերին համապատասխան, դրանց հաշվարկ-հիմնավորումներով:*

*Հաշվարկ-հիմնավորումներում առնվազն պետք է ներառվեն ծախսերի հաշվարկման գործող մեթոդաբանությամբ և նորմատիվներով կոնկրետ հաշվարկները և կանխատեսումների հիմքում դրված սցենարները՝ դրանց վրա ազդող գործոնային գնահատումներով և պարզաբանումներով՝ 2023/2022թթ. համադրմամբ և շեղումների դեպքում՝ համապատասխան պարզաբանումների ներկայացմամբ, այդ թվում՝*

*- աշխատողների թվաքանակը, ըստ պաշտոնների աշխատավարձի ամսեկան դրույքաչափերը և աշխատավարձի ֆոնդի հաշվարկը, համադրումը ընթացիկ տարվա ցուցանիշների հետ և փոխկապակցումը ծրագրի իրականացման ընթացքի հետ,*

*- ծառայությունների (գործառնական և բանկային, էներգետիկ, կոմունալ, կապի, ապահովագրության, վարձակալության և այլն) ձեռքբերման ծախսերի հաշվարկը, համադրումները և փոփոխության դեպքում՝ դրանց գործոնային ազդեցության գնահատումները և պարզաբանումները,*

*- գործուղումների և շրջագայությունների (ներքին և արտաքին) ու գործուղվող անձանց քանակը, մեկնման վայրերը, անհրաժեշտությունը և նպատակը, գործուղման ծախսերի հաշվարկ-հիմնավորումները, համադրումները և կապը ծրագրի իրականացման տվյալ փուլի հետ,*

*- այլ պայմանագրային ծառայությունների (վարչական, համակարգչային, տեղեկատվական, մասնագիտական զարգացման, կառավարչական, ներկայացուցչական և այլն) անհրաժեշտությունը, պահանջվող գումարների հաշվարկները, մրցույթների ընթացքի, պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվությունը և պարզաբանումները,*

*- ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի գծով (շենքեր և մեքենաներ) հաշվարկները, նորոգման բնույթը և ծավալը, և այդ շրջանակներում կատարվող ձեռքբերումների հիմնավորումը,*

*- նյութերի (գրասենյակային, վերապատրաստման, տրանսպորտային) և այլ ծախսերի գծով հաշվարկները և համադրումները:*

## 8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

*Ներկայացնել 2021-2023 թթ ժամանակահատվածի համար պետական մարմնի մարմնի պատասխանատվության ներքո գտնվող բնագավառ(ներ)ի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը (ներառյալ գոյություն ունեցող պարտավորությունները և նոր նախաձեռնությունները)՝ սույն ցուցումների ՄԱԱ 3-ի հավելվածներ 10-ում և 11-ում ներկայացված աղյուսակների ձևաչափերին համապատասխան:*

## 9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

*Ներկայացնել հայտի հետ կապված հիմնական ռիսկերը և դրանց վերլուծությունը: Մասնավորապես ներկայացնել հայտի (ըստ առանձին ծրագրերի) հիմքում ընկած ենթադրությունների իրատեսականության հետ կապված հիմնական ռիսկերը (օրինակ ծախսային գործոնների գծով չճշտված ենթադրություններ, կամ ծառայությունների նկատմամբ պահանջարկի մակարդակի չճշտված կանխատեսումներ և այլն), որոնք կարող են բացասաբար ազդել հայտով ներկայացված նպատակների և արդյունքների ձեռք բերման վրա:*

*Ռիսկերի վերլուծությունը պետք է պարունակի հնարավոր ռիսկերի նկարագրությունը, դրանց հանդես գալու հավանականությունը, վերջիններիս հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա, ինչպես նաև այդ ռիսկերի կանխման/հաղթահարման հնարավոր ուղիները: Ռիսկերի վերլուծության վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփել ստորև բերված աղյուսակում:*

| Ռիսկի նկարագրությունը | Երևույթի հանդես գալու հավանականությունը[6] | Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա | Ռիսկի կանխման/ հաղթահարման հնարավոր ուղիները |
|---|---|---|---|
| | | | |
| .... | | | |

[6] *Ներկայացնել 1-5 թվանշանով, որտեղ 1 թվանշանը ենթադրում է առավել բարձր հավանականություն*

## ՄԱՍ 3. ՄԺԾԾ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### Հավելված N 1. Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ամփոփ ձևաչափ[1]

| | |
|---|---|
| Ծրագիրը՝ [2] | |
| Միջոցառումը՝ [3] | |
| Միջոցառման հիմքում դրված ծախսային պարտավորության բնույթը՝ [4] | |

**Աղյուսակ 1. Ծախսերի վրա ազդող ծախսային գործոնները**

| Ծախսային գործոնը և սպառվող (ծախսվող) ռեսուրսը [5] | Գործոնի տեսակը[6] | Չափի միավորը[7] | Ստանդարտի (նորմատիվի) առկայությունը[8] | Գործոնի կամ ռեսուրսի սպառման (ծախսման) մակարդակը[9] | | | | | Հիմնավորումներ/Պատճառներ[10] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2019թ. | 2020թ. | 2021թ. | 2022թ. | 2023թ. | |
| Գնային և ոչ գնային գործոններ՝ | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| ..... | | | | | | | | | |
| Սպառվող ռեսուրսներ՝ | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| ..... | | | | | | | | | |

**Աղյուսակ 2. Ծախսերի ամփոփ հաշվարկը (առանց ծախսային խնայողությունների գծով առաջարկների ներառման)**[11]

| Ծախսային տարրերը[12] | <Լրացնել ծախսային գործոնի կամ սպառվող ռեսուրսի անվանումը և չափման միավորը> [13] | | | | | <Լրացնել ծախսային գործոնի կամ սպառվող ռեսուրսի անվանումը և չափման միավորը>[13] | | | | | … | Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)[14] | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2019թ. փաստ. | 2020թ. բյուջե | 2021թ. | 2022թ. | 2023թ. | 20198թ. փաստ. | 20120թ. բյուջե | 2021թ. | 2022թ. | 2023թ. | … | 2019թ. փաստ. | 2020թ. բյուջե | 2021թ. | 2022թ. | 2023թ. |
| Ընդամենը փոփոխության ենթարկված ծախսեր (հազ. դրամ)[15], այդ թվում ըստ առանձին ծախսային տարրերի՝ | X | X | X | X | X | X | X | X | X | X | **…** | | | | | |
| <*Լրացնել ծախսային տարրի անվանումը*> | | | | | | | | | | | | | | | | |
| <*Լրացնել ծախսային տարրի անվանումը*> | | | | | | | | | | | | | | | | |
| … | | | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը փոփոխության չենթարկված ծախսեր (հազ. դրամ)[16] | X | X | X | X | X | X | X | X | X | X | **…** | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ (հազ. դրամ)[17] | X | X | X | X | X | X | X | X | X | X | **…** | | | | | |

**Աղյուսակ 3. Ծախսային խնայողությունների գծով առաջարկները** [18]

**1. Միջոցառման գծով ծախսային խնայողության վերաբերյալ առաջարկի բնույթը՝** [19]

☐ Կիրառվող ռեսուրսների սպառման ծավալների փոփոխություն

☐ Կիրառվող ռեսուրսների տեսակներում (համախմբությունում) փոփոխություն

☐ «Արտադրել - գնել» այլընտրանքի կիրառում

☐ Այլ (նկարագրել)՝_______________________________________________________________

**2. Նկարագրություն՝** [20]

**3. Ծախսերի ամփոփ գնահատականը՝** [21]

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի անվանումը | Միջոցառման գծով հաշվարկված ծախսերը[22] (հազ. դրամ) | | | Ծախսային խնայողության գծով ամփոփ առաջարկը[23] (հազ. դրամ) (+/-) | | | Միջոցառման գծով ծախսերը[24] (հազ. դրամ) | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2021թ | 2022թ | 2023թ | 2021թ | 2022թ | 2023թ | 2021թ | 2022թ | 2023թ |
| <*Լրացնել բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի անվանումը*> | | | | | | | | | |
| <*Լրացնել բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի անվանումը*> | | | | | | | | | |
| … | | | | | | | | | |
| Ընդամենը | | | | | | | | | |

## *ԼՐԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ*

### *Հավելված N 1. Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ամփոփ ձևաչափի*

*1. Ձևաչափը լրացվում է բյուջետային ծրագրերի յուրաքանչյուր միջոցառման համար առանձին փաստաթղթի տեսքով*
*2. Լրացվում է բյուջետային ծրագրի դասիչը և անվանումը*
*3. Լրացվում է բյուջետային ծրագրի միջոցառման դասիչը և անվանումը*
*4. Լրացվում է միջոցառման հիմքում դրված ծախսային պարտավորության բնույթը՝ «Պարտադիր ծախսերին դասվող միջոցառում», «Հայեցողական ծախսերին դասվող միջոցառում (շարունակական)», «Հայեցողական ծախսերին դասվող միջոցառում (ոչ շարունակական)»:*

#### *Աղյուսակ 1. Ծախսերի վրա ազդող ծախսային գործոնները*

*5. «Ծախսային գործոնը կամ սպառվող (ծախսվող) ռեսուրսը» սյունակում ներկայացվում են ծախսերի մակարդակի վրա ուղղակիորեն ազդող բոլոր այն գործոնները, որոնց ազդեցությամբ փոփոխություններ են կատարվել ծախսերում, ինչպես նաև այն ռեսուրսների անվանումները, որոնց սպառման (ծախսման) չափերը փոխվել են այդ գործոնների անմիջական ազդեցությամբ: Ծախսային գործոնները պետք է ներառեն միայն այն գնային և ոչ գնային գործոնները, որոնց մակարդակների փոփոխությունները կատարվել են հայտատուից անկախ պատճառներով և որոնք անմիջականորեն ազդել են ռեսուրսների սպառման (ծախսման) մակարդակի կամ դրանց գների վրա (օրինակ՝ շահառուների թվաքանակի փոփոխությունը, նվազագույն աշխատավարձի փոփոխությունը և այլն): Սպառվող ռեսուսրները պետք է ներառեն այն բոլոր ռեսուրսները, որոնց սպառման (ծախսման) մակարդակները փոփոխվել են վերոհիշյալ գործոնների ազդեցությամբ և որոնք հանգեցրել են ծախսերի հաշվարկների փոփոխության (օրինակ՝ աշխատողների թվաքականի փոփոխություն, էլեկտրաէներգիային սպառման ծավալների փոփոխություն և այլն):*
*6. «Գործոնի տեսակը» սյունակում ներկայացվում են համապատասխան գործոնի տեսակը՝ «գնային գործոն» կամ «ոչ գնային գործոն»:*
*7. «Չափի միավորը» արտահայտում է համապատասխան գործոնի ցուցանիշի չափման միավորը:*
*8. «Ստանդարտի (նորմատիվի) առկայությունը» սյունակում լրացվում է «Ոչ» բառը համապատասխան ցուցանիշի հետ կապված ծախսային ստանդարտների (նորմատիվի) բացակայության դեպքում, իսկ դրա առկայության դեպքում կատարվում է հղում այդ ստանդարտը կամ նորմատիվը սահմանող փաստաթղթին:*
*9. «Գործոնի կամ ռեսուրսի սպառման (ծախսման) մակարդակը» սյունակում լրացվում է ծախսային գործոնների կամ դրանց ազդեցությամբ փոփոխված՝ ռեսուրսների սպառման (ծախսման) մակարդակներն արտահայտող ցուցանիշները՝ համապատասխան տարիների համար:*
*10. «Հիմնավորում/պատճառներ» սյունակում լրացվում են գործոնի մակարդակների, ինչպես նաև դրանց ազդեցությամբ համապատասխան ռեսուրսների սպառման մակարդակների փոփոխության պատճառներն ու հիմնավորումները: Ներկայացվում են հիմնավորումներ ծախսերի վրա ազդող գործոնների ընտրության և բյուջետավորվող տարիներից յուրաքանչյուրում նախորդ ժամանակահատվածների համեմատ կանխատեսվող փոփոխությունների վերաբերյալ: Հիմնավորումները ներկայացնելիս, անհրաժեշտ է ներկայացնել նաև այն ընդհանուր երևույթները/գործոնները/հանգամանքները, որոնք ազդել են համապատասխան գործոնների կանխատեսվող փոփոխությունների վրա (օրինակ պահանջարկի փոփոխություն, իրավական ակտերի ընդունում և այլն):*

*Սպառվող ռեսուրսներից յուրաքանչյուրի համար պետք է ներկայացնել, թե որ գործոնի ազդեցությամբ է փոփոխության ենթարկվել տվյալ ռեսուրսի սպառման (ծախսման) մակարդակը:*

### *Աղյուսակ 2. Ծախսերի ամփոփ հաշվարկն (առանց ծախսային խնայողությունների գծով առաջարկների ներառման)*

*11. Աղյուսակում ներկայացվում է միջոցառման գծով գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների ճշգրտված հաշվարկը առանց ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկների ներառման: Ծախսակազմման նպատակով մեկից ավելի ծախսերի օբյեկտների առանձնացման դեպքում յուրաքանչյուր ծախսերի օբյեկտի համար լրացվում է առանձին աղյուսակ:*

*12. «Ծախսային տարրերը» սյունակում ներկայացվում է տվյալ միջոցառմանն առնչվող ծախսային տարրերը՝ խմբավորված ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների: Ընդ որում, ըստ հոդվածների բացված ներկայացվում են միայն այն ծախսերը, որոնց հաշվարկներում հայտատուից անկախ պատճառներով փոփոխություններ են կատարվել բազային տարվա (2019թ) ծախսերի համեմատ: Բազային տարում համապատասխան ծախսերի վերաբերյալ փաստացի ցուցանիշների բացակայության դեպքում որպես համեմատության ելակետ անհրաժեշտ է դիտարկել 2020 թվականի համար հաստատված համապատասխան պլանային ցուցանիշները:*

*13. Լրացվում է ծախսերի փոփոխության հանգեցրած գնային և ոչ գնային գործոնների կամ սպառվող ռեսուրսների անվանումները և չափման միավորները, ինչպես նաև դրանց մակարդակները (գնային գործոնների դեպքում՝ դրամական, իսկ ոչ գնային գործոնների դեպքում բնաիրային արտահայտությամբ) համապատասխան տարիների համար: Մեկից ավելի համապատասխան գործոնների/ռեսուրսների առկայության պարագայում դրանցից յուրաքանչյուրի համար անհրաժեշտ է աղյուսակում ավելացնել նոր սյունակներ: Ընդ որում, անհրաժեշտության դեպքում, բացի համապատասխան ծախսերում փոփոխության հանգեցրած գործոններից/ռեսուրսներից անհրաժեշտ է ներառել նաև այն գործոնների/ռեսուրսների վերաբերյալ տվյալները, որոնք ներառված են այդ ծախսերի հաշվարկներում, սակայն չեն ենթարկվել փոփոխության:*

*14. Լրացվում է համապատասխան ծախսային տարրերի գծով ծախսերի հաշվարկը: Այն հաշվարկվում է ելնելով ծախսային (գնային և ոչ գնային) գործոնների կամ ռեսուրսների սպառման մակարդակներից:*

*15. «Ընդամենը փոփոխության ենթարկված ծախսեր» տողում լրացում է բազային տարվա (2019թ) ծախսերի համեմատ հայտատուից անկախ պատճառներով փոփոխության ենթարկված բոլոր ծախսային տարրերի (հոդվածների) գծով ընհանուր ծախսերը: Այն հավասար է փոփոխության ենթարկված հոդվածների գծով ծախսերի հանրագումարին: Բազային տարում համապատասխան ծախսերի վերաբերյալ փաստացի ցուցանիշների բացակայության դեպքում որպես համեմատության ելակետ անհրաժեշտ է դիտարկել 2020 թվականի համար հաստատված համապատասխան պլանային ցուցանիշները:*

*16. «Ընդամենը փոփոխության չենթարկված ծախսեր» տողում լրացում է բազային տարվա (2019թ) ծախսերի համեմատ փոփոխության չենթարկված բոլոր ծախսային տարրերի (հոդվածների) գծով ընհանուր ծախսերը: Այն հավասար է փոփոխության չենթարկված ծախսային տարրերի (հոդվածների) գծով ծախսերի հանրագումարին: Ընդ որում, այդ ծախսային տարրերի (հոդվածների) գծով ծախսերի բացվածքը աղյուսակում չի ներկայացվում: Բազային տարում համապատասխան ծախսերի վերաբերյալ փաստացի ցուցանիշների բացակայության դեպքում որպես համեմատության ելակետ անհրաժեշտ է դիտարկել 2020 թվականի համար հաստատված համապատասխան պլանային ցուցանիշները:*

*17. «ԸՆԴԱՄԵՆԸ» տողում լրացում է միջոցառման գծով բոլոր ծախսերի հանրագումարը՝ համապատասխան տարիների համար:*

***Աղյուսակ 3. Ծախսային խնայողությունների գծով առաջարկները***

*18. Աղյուսակում ներկայացվում է միջոցառման գծով ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկները՝ համապատասխան հաշվարկներով և հիմնավորումներով: Ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկները ներկայացվում են սույն հավելվածի Աղյուսակ 2-ում համապատասխան փարիների համար հաշվարկված ծախսերի նկատմամբ:*

*19. Նշվում է միջոցառման գծով ծախսային խնայողության վերաբերյալ առաջարկի բնույթը՝ համապատասխան փողի դիմացի վանդակում դնելով <X> նշանը:*

*20. Ներկայացվում է միջոցառման գծով հաշվարկված ծախսերում խնայողությունների վերաբերյալ առաջարկի մանրամասն նկարագրությունը՝ ներառյալ համապատասխան հաշվարկներն ու հիմնվորումները: Անհրաժեշտության դեպքում մանրամասն այդ հաշվարկներն ու հիմնավորումները կարող են ներկայացվել աղյուսակի կից ֆայլերի տեսքով:*

*21. Ներկայացվում է ծախսերի ամփոփ գնահատականը ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկների իրականացման արդյունքում:*

*22. Ներկայացվում է միջոցառման գծով հաշվարկված ծախսերն (առանց ծախսային խնայողությունների վորաբերյալ առաջարկների ներառման) ըստ առանձին փարիների՝ տնտեսագիտական դասակարգման հոդվածներով բացվածի: Հաշվարկված ծախսեր են համարվում սույն հավելվածի Աղյուսակ 2-ում համապատասխան փարիների համար հաշվարկված ծախսերը:*

*23. Ներկայացվում է միջոցառման գծով ծախսային խնայողության վերաբերյալ ամփոփ առաջարկը՝ տնտեսագիտական դասակարգման հոդվածներով բացված: Սյունակում ծախսային խնայողությունների գծով առաջարկների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է հաշվարկային ծախսերի նկատմամբ դրական կամ բացասական փոփոխությունների տեսքով:*

*24. Ներկայացվում է միջոցառման գծով առաջարկվող ծախսերը՝ ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկները ներառած: Այն հավասար է տվյալ հոդածի գծով նախոնդ երկու սյունակներում ներառված ցուցանիշների հանրագումարին:*

## Հավելված N 2. Նոր նախաձեռնությունների ներկայացման ձևաչափ[1]

**1. Պետական մարմինը**

1.1 Պետական մարմնի անվանումը՝ [2]

______________________________

1.2 Նոր նախաձեռնությանն առնչվող այլ պետական մարմինների անվանումները՝ [3]

______________________________

**2. Ծրագիրը [4]**

2.1 Ծրագրի անվանումը՝ [5] ______________________________

2.2 Ծրագրի դասիչը՝ [6] ______________

2.3 ☐ Նոր ծրագիր (հիմնավորումներ և բացատրություններ)՝ [7] ______________________________

**3. Միջոցառումը**

3.1 Միջոցառման անվանումը՝ [8] ______________________________

3.2 Միջոցառման դասիչը՝ [9] ______________

3.3 Միջոցառման (պետության միջամտության) տեսակը՝

☐ Ապրանք և ծառայություն ☐ Տրանսֆերտ

☐ Այլ (նկարագրություն) ______________________________

3.4 ☐ Նոր միջոցառում (հիմնավորումներ և բացատրություններ)՝ [10] ______________________________

☐ Գոյություն ունեցող միջոցառման ընդլայնում (հիմնավորումներ և բացատրություններ)՝ [11]

______________________________

3.5 Նոր նախաձեռնության ծախսերի հիմքում դրված պարտավորության բնույթը՝ [12]

☐ Պարտադիր ծախսային պարտավորություն ☐ Հայեցողական ծախսային պարտավորություն, այդ թվում՝

☐ Շարունակական ☐ Ոչ շարունակական

| Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը[13] | Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները[14] | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը [15] |
|---|---|---|
| | | |
| | | |

4. Նպատակը [16]

___

___

5. Նկարագրությունը [17]

___

___

6. Սպասվող օգուտները [18]

___

___

7. Նոր նախաձեռնությունը չֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրները [19]

___

___

| 8.Արդյունքային չափորոշիչները [20] | Չափի միավորը | 2021թ. | 2022թ. | 2023թ. | *Միջոցառման ավարտի պարեթիվը* [21] |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| ..... | | | | | |

| 9. Պահանջվող ռեսուրսները [22] | ՀՀ դրամ | 2021թ. | 2022թ. | 2023թ. | *Միջոցառման ավարտի տարեթիվը* |
|---|---|---|---|---|---|
| | X | | | | |
| .... | X | | | | |
| Ընդամենը | X | | | | |
| 10. Ֆինանսավորման աղբյուրը [23] | ՀՀ դրամ | 2021թ. | 2022թ. | 2023թ. | *Միջոցառման ավարտի տարեթիվը* |
| Պետական բյուջե | X | | | | |
| Այլ աղբյուրներ | X | X | X | X | X |
| | X | | | | |
| ... | X | | | | |
| Ընդամենը պետական բյուջեի և այլ աղբյուրների գծով | X | | | | |
| 11. Արդյունքների այլ մակարդակներ արտահայտող այլընտրանքներ | | | | | |
| Այլընտրանք # 2 (նվազագույն արդյունքների սցենար) [24] | | | | | |
| 12. Նոր նախաձեռնության իրականացման այլ եղանակներ արտահայտող այլընտրանքներ [25] | | | | | |
| Այլընտրանք # 3 | | | | | |
| Այլընտրանք # ... | | | | | |
| 13.Այլ անհրաժեշտ տեղեկատվություն և հիմնավորումներ [26] | | | | | |
| | | | | | |

## ԼՐԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

### Հավելված N 2. Նոր նախաձեռնությունների ներկայացման ձևաչափի

1. Յուրքանչյուր առանձին նոր նախաձեռնության համար լրացվում է առանձին ձևաչափ:
2 Նշել նոր նախաձեռնությունը ներկայացնող պետական մարմնի անվանումը:
3. Նշվում է փվյալ նոր նախաձեռնությանն առնչվող (կապարող) պետական մարմինների անվանումները՝ բացառությամբ հայտը ներկայացնող պետական մարմնի անվանման: Լրացվում է միայն այն դեպքում, երբ նոր նախաձեռնությունը առնչվում է մեկից ավելի պետական մարմինների:
4. Հավելվածի այս և հաջորդող հատվածներում ծրագրի և միջոցառման սահմանման, ինչպես նաև դրանց բաղադրիչների (նպատակներ, արդյունքային ցուցանիշներ և այլն) սահմանման/ նկարագրության համար անհրաժեշտ է առաջնորդվել սույն մեթոդական ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Ծրագրային բյուջետավորման ձևաչափով բյուջետային ծրագրերի և միջոցառումների սահմանման» և «Ծրագրային բյուջետավորման ձևաչափով բյուջետային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային ցուցանիշների սահմանման» մեթոդական ձեռնարկներով:
5. Լրացվում է համապատասխան բյուջետային ծրագրի անվանումը, որի շրջանակներում նախատեսվում է նոր նախաձեռնության իրականացումը և ֆինանսավորումը: Այն դեպքում, երբ նոր նախաձեռնությունը ենթադրում է նոր բյուջետային ծրագրի իրականացում, ապա անհրաժեշտ է ներքևում Նոր ծրագրի դիմացի վանդակում դնել <X> նշանը և ներկայացնել համապատասխան հիմնավորումներ նոր ծրագրի անհրաժեշտության վերաբերյալ:
6. Լրացվում է համապատասխան ծրագրի քառանիշ կոդը: Նոր ծրագրերի դեպքում այս փողը չի լրացվում:
7. Վանդակում դրվում է <X> նշանը, եթե նոր նախաձեռնությունը ենթադրում է նոր բյուջետային ծրագրի ներմուծում: Հակառակ դեպքում վանդակը թողնվում է դատարկ:
8. Լրացվում է ծրագրի միջոցառման անվանումը, որի շրջանակներում նախատեսվում է նոր նախաձեռնության իրականացումը և ֆինանսավորումը:
9. Լրացվում է ծրագրի միջոցառման դասիչը այն դեպքում, երբ նոր նախաձեռնությունը ենթադրում է գոյություն ունեցող ծառայությունների կամ տրանսֆերտների տարածում շահառուների նոր շրջանակի վրա: Նոր միջոցառման (օրինակ՝ նոր տիպի ծառայությունների մատուցում) դեպքում այս փողը չի լրացվում:
10. Այն դեպքում, երբ նոր նախաձեռնությունը ենթադրում է ծրագրի նոր միջոցառման ներմուծում, ապա անհրաժեշտ է Նոր միջոցառման դիմացի վանդակում դնել <X> նշանը և ներկայացնել համապատասխան հիմնավորումներ նոր միջոցառման անհրաժեշտության վերաբերյալ: Հակառակ դեպքում վանդակը թողնվում է դատարկ:
11. Այն դեպքում, երբ նոր նախաձեռնությունը ենթադրում է գոյություն ունեցող միջոցառման ընդլայնում (գոյություն ունեցող ծառայությունների կամ տրանսֆերտների տարածում շահառուների նոր շրջանակի վրա), ապա անհրաժեշտ է Գոյություն ունեցող միջոցառման ընդլայնման դիմացի վանդակում դնել <X> նշանը և ներկայացնել համապատասխան հիմնավորումներ միջոցառման ընդլայնման վերաբերյալ: Հակառակ դեպքում վանդակը թողնվում է դատարկ:
12. Նշվում է նոր նախաձեռնության շրջանակներում իրականացվող ծախսերի հիմքում դրված պարտավորությունների բնույթը: Անհրաժեշտ է համապատասխան տիպի պարտավորության դիմացի վանդակում դնել <X> նշանը:
13. Ներկայացվում է համապատասխան միջոցառման շրջանակներում իրականացվող պարտադիր (պարտադիր ծախսերին դասվող միջոցառումների դեպքում) կամ հայեցողական (հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների դեպքում) պարտավորությունների համառոտ նկարագիրը՝ այդ թվում մատուցվող ծառայությունների, տրամադրող տարնսֆերտների և շահառուների շրջանակը:

*14. Սյունակը լրացվում է միայն պարտադիր ծախսերին դասվող միջոցառումների համար:*

*15. Սյունակում կատարվում են հղումներ պարտադիր ծախսային պարտավորությունները սահմանող օրենքների և միջազգային պայմանագրերի կոնկրետ դրույթների վրա, իսկ այդ պարտավորությունների շրջանակներում գործադիր մարմին վերապահված հայեցողական իրավասությունների դեպքում՝ նաև այդ իրավասությունները սահմանող իրավական ակտերի վրա: Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումների դեպքում կատարվում են հղումներ այդ ծախսային պարտավորությունները սահմանող իրավական ակտերի վրա: Նոր իրավական կարգավորումներ նախատեսելու պարագայում անհրաժեշտ է նշումներ կատարել այդ մասին:*

*16. Համառոտ նկարագրել նոր նախաձեռնության նպատակը: Նպատակը սահմանելիս անհրաժեշտ է նկարագրել, թե ինչպես են առաջարկվող միջոցառումները նպաստելու պետական մարմնի առաքելության, ՀՀ կառավարության ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը: Անհրաժեշտ է կատարել հղումներ ՀՀ կառավարության ընդհանուր նպատակներն ու գերակայությունները սահմանող համապատասխան փաստաթղթերին:*

*17. Մանրամասն նկարագրել նոր նախաձեռնության շրջանակներում իրականացվող միջոցառումները (մատուցվող ծառայությունները, տրամադրվող տրանսֆերտները և այլն), դրանց գծով հիմնական շահառուների շրջանակները, միջոցառման իրագործման մեխանիզմները (ծառայությունների պատվիրակում ՊՈԱԿ-ներին, պետական կառավարչական հիմնարկների կարողությունների օգտագործում և այլն), պետական բյուջեից ֆինանսավորման մեխանիզմները և այլ անհրաժեշտ տեղեկատվություն, որն ընդհանուր առմամբ նկարագրում է նոր նախաձեռնությունը:*

*18. Համառոտ նկարագրել նոր նախաձեռնության արդյունքում ակնկալվող հիմնական օգուտները: Օգուտները նկարագրելիս հնարավորության սահմաններում անհրաժեշտ է ներկայացնել այն հիմնական վերջնական արդյունքները, որոնց նպաստելու է նախաձեռնության իրականացումը, և թե ինչպես են դրանք նպաստելու ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների իրագործմանը:*

*19. Համառոտ նկարագրել նոր նախաձեռնությունը չընդունելու և չֆինանսավորելու դեպքում հնարավոր հետևանքները և ծագող խնդիրները: Հնարավորության սահմաններում ներկայացնել թվային գնահատականներ: Եթե նախատեսվում է նոր նախաձեռնություն գործող պարտավորությունների դադարեցման կամ կրճատման հաշվին, սակայն պահանջվում է համապատասխան նոր իրավական հիմքերի ստեղծում և չի կարող կատարվել միայն պետական մարմնին գործող օրենսդրությամբ վերապահված իրավասության շրջանակներում իրականացվող ներքին ընթացակարգերի միջոցով, ապա ներկայացնել համապատասխան բացատրություններ և հիմնավորումներ:*

*20. Ներկայացվում են նոր նախաձեռնության գծով ակնկալվող ոչ ֆինանսական արդյունքների կանխատեսումները: Այն դեպքերում, երբ նոր նախաձեռնությունը ենթադրում է գոյություն ունեցող միջոցառման ընդլայնում, ապա այս դպքում ներկայացվում են միայն այն ոչ ֆինանսական արդյունքները, որոնք փոփոխության կենթարկվեն նախաձեռնության իրականացման արդյունքում: Այն ծրագրերի և միջոցառումների դեպքում, որոնք առնչվում են ՀՀ կառավարության գենդերային քաղաքականության նպատակներին և գերակայություններին՝ արտացոլված համապատասխան ռազմավարություններում և ծրագրերում, ոչ-ֆինանսական արդյունքների ցուցանիշների կազմում անհրաժեշտ է ներառել գենդերային զգայուն ոչ-ֆինանսական ցուցանիշներ:*

*21. Ներկայացվում է կանխատեսվող ցուցանիշները նախաձեռնության ավարտի համար նախատեսված տարեթվի դրությամբ: Լրացվում է միայն այն նախաձեռնությունների համար, որոնք ունեն հստակ կամ կանպատեսվող ավարտի ժամկետ:*

*22. Ներկայացվում է նախաձեռնության գծով սպառվող ռեսուրսների և դրանց գծով ծախսերի կանխատեսումները (ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների): Անհրաժեշտ է փաստաթղթին կցել ծախսակազմումների (ներառյալ հաշվարկների) բոլոր մանրամասները: Ծախսակազմումն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներով», իսկ տվյալ ծրագրի կամ միջոցառման գծով ծախսակազմման մանրամասն ուղեցույցների առկայության դեպքում՝ այդ մանրամասն ուղեցույցների պահանջներով:*

*23. Ներկայացվում է նոր նախաձեռնության գծով ծախսերի ֆինանսավորման ակնկալվող աղբյուրները:*

*24. Ներկայացվում է համապատասխան միջոցառումը նվազագույն մակարդակում (այն մակարդակը, որից ներքև հնարավոր չի հասնել սահմանված նպատակներին) իրականացնելու այլընտրանքը: Մասնավորապես ներկայացվում է այդ այլընտրանքի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների/ծախսերի և սպասվող արդյունքների գնահատականները, ինչպես նաև մյուս այլընտրանքների համեմատ առավելություններն ու թերությունները: Ներկայացվում է նաև հիմնավորումներ այն մասին, թե ինչու տվյալ այլընտրանքը չի դիտարկվել որպես նախընտրելի այլընտրանք (նախընտրելի այլընտրանքի մանրամասները ներկայացվում են 8-ից 10-րդ կետերում): Այլընտրանքի ծախսակազմման (ներառյալ հաշվարկների) մանրամասները կցվում են: Ծախսակազմումն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներով», իսկ տվյալ ծրագրի կամ միջոցառման գծով ծախսակազմման մանրամասն ուղեցույցների առկայության դեպքում՝ այդ մանրամասն ուղեցույցների պահանջներով: Այն դեպքում, երբ 8-ից 10-րդ կետերում ներկայացված առաջարկը (նախընտրելի այլընտրանքը) հանդիսանում է միջոցառումը նվազագույն մակարդակում իրականացնելու սցենարն, ապա 11-րդ կետում պարզապես կատարվում է նշում այդ մասին:*

*25. Ներկայացվում են նախաձեռնության իրականացման այլ եղանակներ արտահայտող այլընտրանքները: Վերջիններս կարող են վերաբերվել արտադրելու կամ գնելու այլընտրանքին, պետական կամ մասնավոր հատվածին պատվիրակելու այլընտրանքին, տարբերակված ժամանակային հորիզոնների այլընտրանքներին, ինչպես նաև սպառվող ռեսուրսների համախմբության այլընտրանքներին: Այլընտրանքներից յուրաքանչյուրի համար ներկայացվում է այդ այլընտրանքի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների/ծախսերի և սպասվող արդյունքների գնահատականները, ինչպես նաև մյուս այլընտրանքների համեմատ առավելություններն ու թերությունները: Այլընտրանքներից յուրաքանչյուրի մասով ներկայացվում են նաև հիմնավորումներ այն մասին, թե ինչու համապատասխան այլընտրանքները չեն դիտարկվել որպես նախընտրելի այլընտրանքներ (նախընտրելի այլընտրանքի մանրամասները ներկայացվում են 8-ից 10-րդ կետերում): Այլընտրանքների ծախսակազմման (ներառյալ հաշվարկների) մանրամասները կցվում են: Ծախսակազմումն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել սույն ցուցումների բաղկացուցիչ մաս հանդիսացող «Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցներով», իսկ տվյալ ծրագրի կամ միջոցառման գծով ծախսակազմման մանրամասն ուղեցույցների առկայության դեպքում՝ այդ մանրամասն ուղեցույցների պահանջներով:*

*26. Ներկայացվում են նոր նախաձեռնության հետ կապված այլ անհրաժեշտ տեղեկատվություն և հիմնավորումներ:*

## Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ[7]

| | |
|---|---|
| Պետական մարմնի անվանումը՝ | *<Լրացնել պետական մարմնի անվանումը>*[8] |

### ՄԱՍ 1. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

| |
|---|
| 1.Հիմնական ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքները |
| *<Համառոտ ներկայացնել այն հիմնական ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքները, որոնց վրա պետական մարմինը ձգտում է ներազդել իր պատասխանատվության ներքո իրականացվող բյուջետային ծրագրերի և միջոցառումների միջոցով>* |
| 2. Բյուջետային ծրագրերում կատարվող հիմնական փոփոխությունները |
| *<Համառոտ ներկայացնել պետական մարմնի պատասխանատվության ներքո իրականացվող բյուջետային ծրագրերում կատարվող հիմնական փոփոխությունները՝ ներառյալ փոփոխություններ մատուցվող ծառայություններում, տրամադրվող տրանսֆերտներում և շահառուների շրջանակներում: Ներկայացնել միայն այն փոփոխությունները, որոնք հատկապես կարևորվում են հիմնական գերակա վերջնական արդյունքների ձեռք բերման տեսանկյունից:>* |
| 3.Կապիտալ բնույթի հիմնական միջոցառումները |
| *<Համառոտ ներկայացնել պետական մարմնի պատասխանատվության ներքո իրականացվող բյուջետային ծրագրերի շրջանակներում իրականացվող այն հիմնական կապիտալ միջոցառումները, որոնք ուղղված են գերակա վերջնական արդյուքների ապահովմանը:<br>Համառոտ ներկայացնել նաև հանրային ակտիվների կառավարամանն ուղղված այն հիմնական միջոցառումները, որոնք կապված են մատուցվող ծառայություններում կատարվող հիմնական փոփոխությունների հետ:>* |
| 4. Ֆինանսական ակտիվների կառավարմանն անչվող միջոցառումները՝ |
| *<Համառոտ ներկայացնել պետական մարմնի պատասխանատվության ներքո իրականացվող բյուջետային ծրագրերի շրջանակներում իրականացվող ֆինանսական ակտիվների կառավարման այն հիմնական միջոցառումները (բաժնետոմսերի ձեռք բերում, վարկերի տրամադրում և այլն), որոնք ուղղված են գերակա վերջնական արդյուքների ապահովմանը:>* |

### ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

| Դասիչ | Ծրագիր/Միջոցառում | 2019թ. Փաստացի (հազ. դրամ) | 2020թ սպասվող (հազ. դրամ) | 2021թ (հազ. դրամ) | 2022թ (հազ. դրամ) | 2023թ (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | | | | | | |

---

